

ՅԵՏ ՄԱՐՈՒ ՄՐՑԱՆԱԿ՝ ՀՐԱՆԳՏԻՆՔԻՆ

Պոլսոյ մէջ հրատարակուող «Ակօս» երկլեզու թերթի խմբագրապետ Հրանդ Տինքին թուրքերոյ մէջ շնորհակատութիւններ արտայայտելով «Մամուլի Ազատութիւն-2007» մրցանակը: Այս մասին «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է «Ակօս»-ի պատասխանատու քարտուղար Սարգիս Սերոբեան:

Թուրքերոյ լրագրողներու միութիւնը որոշած է, «Մամուլի Ազատութիւն-2007» մրցանակը թուրքերոյ Քրէական օրէնագրքի 301-րդ յօդուածէն տուժած եւ ատով դատապարտուած բոլոր լրագրողներու ու գրողներու անունով յանձնել, «Ակօս» շաբաթաթերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինքին, հրատարակիչ Ռազիփ Զարաքօղլուին եւ փաստաբան Գիւլչին Զայլըզիին:

Մրցանակաբաշխութիւնը տեղի պիտի ունենայ Յուլիսի 24-ին՝ Իսթանպուլի «Տոլմաբազէ» պալատին ներս:

«Ակօս»-ի պատասխանատու քարտուղարը ըսած է, թէ Հրանդ Տինքին մրցանակ շնորհելու մասին լուրը իրեն այնքան ալ չէ ոգեշնչած. - «Այս պետական [մրցանակ] չէ, այդ պատճառով ալ ինձի համար մեծ նշանակութիւն չունի: Լրագրողներու միութիւնը ազնուութիւն ցուցաբերած եւ նման մրցանակ շնորհած, երանի թէ անոր կենդանութեան օրօք տային: Մէկ կողմէ, կը ճանչնան տարուայ ամենաքաջ լրագրող, միւս կողմէ՝ այս երկրէն ներս կը շարունակուին լրագրողներին դէմ դատավարութիւնները»,- աւելցուցած է Սարգիս Սերոբեան:

ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՍԱՆՈՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԱՃԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՏԵՂԱՓՈԽՈՒԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կը հաղորդէ որ, Հայրենիք պիտի տեղափոխուին Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեանս նախագահ եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգային բարերար լուսահոգի Ալեք Մանուկեանի եւ անոր կողակից Մարի Մանուկեանի մարմինները, որ կը հանգչէին Միացեալ Նահանգներու Տիթթոյթ քաղաքը:

Մեծանուն հայորդիներու մարմիններու ամփոփման արարողութիւնը տեղի կ'ունենայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ներս, Յուլիս 17-ին եւ աճիւնները պիտի գետեղուին իրենց բարերարութեամբ կառուցուած Գանձատան առջեւ:

Յուղարկակորութիւնը պիտի կատարուի պետական բարձր պատիւներով եւ եկեղեցական ծիսակարգով՝ հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԶԱՊԵՏԸ ՔՆՆԱԴԱՏԱԾ Է ՆԱԹՕ-ԻՆ ԵՒ ԵՒՐԱՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲՈՅ ԿՈՂՄԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄԸ ԱՆՏԵՍԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԱՒ

«Ռոյթըրը» լրատուական գործակալութեան համաձայն, Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեան ըսած է, թէ ՆԱԹՕ-ն եւ Եւրամիութիւնը աչք կը փակեն Հայաստանի շրջափակման փաստի վրայ:

«Եւրոպացիները ամաչկոտ են այդ հարցերում, նրանք սիրում են խօսել մարդու իրաւունքների եւ դեմոկրատական արժէքների մասին, բայց շատ աւելի դիւրին է խօսել, քան իրագործել որեւէ բան», - ըսած է Սերժ Սարգսեան:

«Ռոյթըրը»-ը կը յայտնէ, որ թուրքիա 1993 թուականէն ի վեր փակ կը պահէ Հայաստանի հետ սահմանը՝ այդ ներկայացնելով իբրեւ բողոք իր մտերիմ դաշնակցի՝ Ատրպէյճանի տարածքի մէջ մասը հայկական ուժերու կողմից գրաւելու դէմ: Անգարան կը պնդէ, որ սահմանը չի բացուիր, քանի դեռ Հայաստան Ատրպէյճանի հետ չունի խաղաղութեան համաձայնագիր:

Գործակալութիւնը կը յիշեցնէ, որ թուրքերոյ եւ Ատրպէյճանի կողմէ շրջափակումը Հայաստանին ստիպած են առեւտրային կապերը իրականացնել միայն Վրաստանի եւ Իրանի տարածքով: Այդ դժուարութիւնները հանգեցուցած են գի-



Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեան

ներու աճին:

Սերժ Սարգսեանը, ըստ «Ռոյթըրը»-ի, ըսած է, որ Հայաստան կ'ուզէ առանց նախապայմաններու վերականգնել յարաբերութիւնները թուրքերոյ հետ եւ չառարկէր Եւրամիութեան անդամակցելու Անգարայի մտադրութեան դէմ, քանի որ այդպիսով թուրքիա կը դառնայ աւելի կանխատեսելի:

«Թէեւ ՆԱԹՕ-ի ղեկավարները մեզ հաւատարմացնում են, որ թուրքիան կանխատեսելի երկիր է որպէս ՆԱԹՕ-ի անդամ, ես դրան չեմ հաւատում, որովհետեւ թուրքիան ՆԱԹՕ-ի անդամ էր մինչեւ

մեզ շրջափակելը, ՆԱԹՕ-ի անդամ էր նաեւ Կիպրոսը գրաւելու ժամանակ», - ըսած է Սերժ Սարգսեանը:

Հայաստանի վարչապետը շեշտած է թէ, Հայաստան իր անվտանգութեան ապահովման հարցով տակաւին ունի առանցքային դաշնակից՝ Ռուսաստանի աջակցութեան կարիքը եւ այդ է պատճառը, որ Հայաստանի տարածքին տեղակայուած է 5000 ռուսաստանցի զինծառայող:

«Ես չեմ կարծում, որ թուրքական սպառնալիքը վերացել է, ռուսական ռազմակայանն այդ սպառնալիքի դէմ մեր անվտանգութեան երաշխիքն է», - յայտնած է վարչապետը:

Ան անդրադարձած է նաեւ Քոսովոյի հարցին, ըսելով որ, եթէ արեւմտեան երկիրները ճանչնան Քոսովոյի անկախութիւնը, ապա կրնան ճանչնալ նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերու ինքնորոշման իրաւունքը:

«Այս հարցի լուծումը պէտք է հիմնուած լինի փոքրիջման վրայ, սակայն ես չեմ տեսնում Ատրպէյճանի կողմից որեւէ արձագանք կամ որեւէ քայլ», - ըսած է Սերժ Սարգսեան ու աւելցուցած. - «Մենք արել ենք քայլ, ինչ հնարաւոր էր»:

ՀՈԿԱԼԱՆՏ ԿԸ ՄՆԱՅ ՊՈՒՇԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատան կողմէ հրապարակուած յայտարարութեան համաձայն, Յուլիս 10-էն սկսեալ դեսպան Ռուտոլֆ Փերինաստանձնած է Ամերիկեան դեսպանութեան գործերու հաւատարմատարի պաշտօնը:

«Դեսպան Փերինայի խոր գիտելիքներն ու Հայաստանի մէջ ունեցած փորձը, ինչպէս նաեւ անձնական ու մասնագիտական կապերը ՀՀ ղեկավարութեան հետ մեծապէս կը նպաստեն Հայաստանի հետ երկկողմ յարաբերութիւններու շարունակութեան ապահովման», - ըսուած է դեսպանատան յայտարարութեան մէջ:

«Այս երկարաժամկէտ նշանակում չէ, ու հիմնական ԱՄՆ դեսպան ունենալու կարիքը կը մնայ անփոփոխ»:

Ըստ հաղորդագրութեան՝ դեսպան Ռիչըրտ Հոկլանտ կը շարունակէ մնալ նախագահ Ճորճ Պուշի թեկնածուն Հայաստանի մօտ ԱՄՆ դեսպանի պաշտօնի համար:

Յայտնենք որ, դեսպան Ռիչըրտ Հոկլանտի վաւերացումը Ամերիկեան Ծերակոյտի կողմէ, կը մնայ առկա: Հայկական Յեղասպանութեան ճանաչման մասին իր արտայայտած տեսակէտները անընդունելի կը նկատուին ծերակուտականներու կողմէ:

ՄԵԹԻ ՊՐԱՅՁԱ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԶԵՒ ԶԿԱՅ»

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի օգնականի փոխանորդ եւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահ Մէթիւ Պրայգա յայտարարած է, որ միջազգային իրաւունքի շրջանակներու մօտ «չկայ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի նկատմամբ տարած քայլին ամբողջակամութեան սկզբունքի գերակայութեան համընդհանուր բանաձեւ»:

Յուլիս 9-ին Ուաշինկթըն մէջ կայացած է ապահովութեան հարցերու նուիրուած ԱՄՆ-Ատրպէյճան խորհրդակցութիւններ, որոնց ընթացքին քննարկուած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման թեման:

Խորհրդակցութիւններուն յաջորդած միատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, երբ Ատրպէյճանի արտաքին գործոց փոփ նախարար Արազ Ազիմով յայտարարել է, թէ պաշտօնական Ուաշինկթընը միշտ ալ ճանչցած է Ատրպէյճանի անկախութիւնը եւ տարած քայլին ամբողջակամութիւնը, Մէթիւ Պրայգա տուած է աւելի դիւանագիտական պատասխան:

«Քննարկումներ կ'ընթանան այն հարցի շուրջ, թէ սկզբունքներէն ո՞րն է առաջնային՝ Ատրպէյճանի տարած քայլին ամբողջա-



Միւսկի խումբի համանախագահ Մէթիւ Պրայգա

կանութիւնը, թէ՞ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը», - ըսած է Պրայգա ու աւելցուցած. - «Այդ կապակցութեամբ չկայ ոչ համընդհանուր բանաձեւ, ոչ միջազգային մակարդակով ընդունուած մօտեցում»:

ԻԹԱՌ-ԹԱՍՍ լրատուական գործակալութեան փոխանցած տեղեկութիւններու համաձայն, Պրայգա ըսած է նաեւ, թէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները հասած են այն կէտին, երբ լուրջ եւ բարդ որոշումները պէտք է ընդունին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ» ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՓՈԽՁԻՁՈՒՄՆ ԷՐ

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանի արտասահմանեան հարցազրույցները կարծես թէ աչքի են ընկնում իրենց մէջ թաքնուած անակնկալներով: Օրինակ, վարչապետը արտասահմանեան լրատուամիջոցի էր ասել, թէ դժուար է մտածել մարդու իրաւունքը պաշտպանելու մասին, եթէ սոցիալական հարցերը լուծուած չեն: Ահա օրերս էլ Սերժ Սարգսյանը արտասահմանեան մամուլին տուած հերթական հարցազրույցում մատուցել է հերթական անակնկալը: Վարչապետը հանդիմանել է ՆԱԹՕ-ին ու Եւրամիութեանը, ինչպէս հաղորդում է Ռեզնում գործակալութիւնը, որ այդ կառույցները միայն խօսում են ժողովրդավարութեան մասին, մինչդեռ խօսելն աւելի ճշտ է, քան գործելը: Սերժ Սարգսյանը Ռոյթթերսին տուած հարցազրույցում խօսելով այդ մասին, նկատի է ունեցել հայ-թուրքական յարաբերութեան, մասնաւորապէս Հայաստանը շրջափակելու թուրք-իսրայի գործողութեան հանդէպ ՆԱԹՕ եւ Եւրամիութեան հանդուրժողական վերաբերմունքը: Այդ առումով Սերժ Սարգսյանն իսկապէս իրաւացի է, որովհետեւ միջազգային քաղաքականութեան կենտրոնները հաւասարաչափ են վերաբերում Հայաստանին ու թուրքիային փոխադարձ յարաբերութեան չգոյութեան համար, մինչդեռ ակնյայտ է, որ թուրքիան առաւել կամակոր ու անզիջում կեցողածք ունի այդ հարցում, քան Հայաստանը:

Սակայն այս պարագայում յատկանշականը Երեւանի տօնն է ՆԱԹՕ եւ Եւրամիութեան հանդէպ: Նախկինում այդպիսի յանդիմանական ձեւակերպումներ կարծես թէ չէին հնչում: Աւելին, դատելով պաշտօնական Հայաստանի վերջին գործողութիւններից, մեզ կարող են սպասել Արեւմուտքի հետ լուրջ խօսակցութիւններ: Մասնաւորապէս, Հայաստանի նախագահը յայտարարում է, որ Հայաստանի անդամակցումը ՆԱԹՕ-ին կը նուազեցնի մեր երկրի պաշտպանունակութիւնը: Այդ տարօրինակ եւ ինչ որ առումով անակնկալ յայտարարութեանը հետեւեց նոյնքան տարօրինակ ու անհասկանալի օրինազօր քննարկումն Ազգային ժողովում, որը կասկածի տակ էր դնում Հայաստանում «Ազատութիւն» ռադիոկայանի հետագայ հեւարձակումը: Եթէ դրան գումարենք նաեւ Սերժ Սարգսյանի հանդիմանական տօնը, ապա կ'ստացուի, որ Հայաստանի քաղաքականութեան մէջ տեղի է ունենում որոշակի հակաարեւմտեան շեշտադրում: Պատահական չէ, որ արեւմտեան քաղաքականութեան կառուցներին թերեւս ամենից խորհրդանշականի՝ Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահի հետ Հայաստանի նախագահի հանդիպումը տեւում է աւելի քան երկու ժամ:

Մինչդեռ թուում էր, թէ Արեւմուտքի հետ յարաբերութեան որեւէ արտառոց խնդիր Հայաստանը չպէտք է ունենար այն բանից յետոյ, երբ մայիսի 12-ի խորհրդարանի ընտրութիւնը նոյն այդ Արեւմուտքը ողջունեց գրեթէ միաբերան: Սակայն պէտք է բացառել նաեւ, որ խնդիրը չենց այդ ողջոյնն էր, որն անկասկած ունի

իր գինը: Շատ հաւանական է, որ Հայաստանը պարզապէս չի ցանկանում «վճարել» այդ ողջոյնի դիմաց: Մինչդեռ խորհրդարանի ընտրութեան արդիւնքն ընդունուել է երեւի թէ հենց այդ պայմանով: Պայմանով, որ յետընտրական գարգացումների որակը եւ բովանդակութիւնը փոխհատուցելու է բուն ընտրութեան եւ նախընտրական գործընթացի թերութիւններն ու բացթողումները, որոնք մէկ բառով կարելի է անուանել անօրինականութիւններ: Այլ կերպ ասած, եթէ բացարձակ մեծամասնութեան հասցրած ընտրութեան ելքը համարում է ընդունելի, ապա ոչ այն պատճառով, որ ՀՀԿ կարգախօսն ու գովազդային պատաստների գոյնը դուր է եկել Արեւմուտքին: Բացարձակ մեծամասնութիւնը պարզապէս Հայաստանի իշխանութեան ու Արեւմուտքի փոխզիջումն է:

Արեւմուտքը կատարել է իր գիջումը, իսկ հաւ Հայաստանի իշխանութիւնն այժմ չի ցանկանում դա անել, ինչի համար էլ տեղի է ունենում այդ նկատելի հակաարեւմտականութիւնը: Պէտք է իհարկէ բացառել, որ Արեւմուտքը Հայաստանի իշխանութիւնից պահանջում է այնպիսի գիջում, որը հակասում է մեր պետական շահին: Այդ դէպքում իհարկէ իրաւացի է իշխանութիւնը, որ չի կատարում պայմանը: Սակայն եթէ դա այդպէս է, ապա ամբողջ խնդիրն այն է, որ իշխանութիւնը թերեւս զնացել է հակապետական այդ պայմանադրուածութեանը, յանուն բացարձակ մեծամասնութեան:

Միւս կողմից, կարծես թէ արեւմտեան պայմանը բաւական հրապարակային է՝ արդիւնաւէտ կառավարում եւ ժողովրդավարական գործընթացների արագացում: Հայաստանի իշխանութիւնն էլ կարծես թէ ընդունում է այդ պահանջը: Բայց ահա դրա կեանքի կոչման առումով կատարուող քայլերը կարծես թէ համահունչ չեն այն արդիւնքին, որ իշխանութիւնն արձանագրեց Մայիսի 12-ին: Մասնաւորապէս, ունենալ բացարձակ մեծամասնութիւն, Հանրապետականը չափազանց կարկամ քայլերով ձեռնամուխ եղաւ կառավարութեան ձեւաւորմանը, իսկ դրա վերջնական տեսքն էլ շատ քիչ բանով տարբերուեց նախորդ կառավարութիւնից: Այդ դէպքում բնական հարց է առաջանում, թէ որն էր բացարձակ մեծամասնութեան իմաստը:

Պէտք է գարմանալ նաեւ, որ այդ հարցը կարող է առաջանալ Արեւմուտքում, եւ եթէ հայ հասարակութիւնը անտարբերութեան պատճառով չի բարձրացնում այդ հարցն իշխանութեան առաջ, համարելով, որ բացարձակ թէ յարաբերական, իշխանութեան որակը փոխելու յոյս, միեւնոյն է, չկայ, ապա արեւմտեան քաղաքական կենտրոնները այդ հանգամանքին անտարբեր չեն, քանի որ Հայաստանը նրանց համար դեռեւս շարունակում է մնալ տարածաշրջանում դերակատարութեան ներուժ պարունակող երկիր:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»
Կայքէջ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԳՈՐԾՕՆԸ

Մենք արդէն բազմիցս առիթ ենք ունեցել ներկայացնելու, որ գնալով աւելի ու աւելի շատ քաղաքական ուժեր հակում են համախմբուելու Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ: ՀՀԾ-ից ժամանակին անջատուած գրեթէ բոլոր «բեկորները» եւ այդ ճամբարի հետ վաղուց գործնական կապեր պահպանող «Հանրապետութիւն» կուսակցութիւնը դա անում են անմիջապէս, իսկ ինչ վերաբերում է միւսներին, ապա այդտեղ կապակցող օղակը կարծես թէ լինում է «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնութիւնն իր գլխաւոր հրապարակային գործիչ Նիկոլ Փաշինեանով հանդերձ:

Հենց վերջերս քաղաքական միջավայրում, իսկ այնուհետեւ նաեւ մամուլում յայտնուել է տեղեկա-

Լեւոն Տէր-Պետրոսեանի չափազանց ուժեղացման դէպքում ինչքան գործարար պատգամաւորներ կան, որ կարող են յանկարծակի դառնալ նրա կողմնակից, ապա կարող ենք արձանագրել, որ ՀՀԿ-ն եւ ՀՀԿ-ի թեկնածու Սերժ Սարգսյան-Գի թեկնածու Սերժ Սարգսյան-Գի աչքի առաջ ուրուագծուում է եւ հնարաւոր «նդծաւանջը»

տուութիւն, որ Ստեփան Դեմիրճեանն ու անգամ Արտաշէս Գեղամեանը միգրացի բանակցութիւնների միջոցով միանան այդ «նարնջագոյն» շարժմանը, եւ արդէն իսկ շփումներ են հաստատել «Այլընտրանքի» հետ: Նոյնը որոշ վերապահումներով խօսւում է եւ ընդդիմութեան միակնական թեկնածու լինելու յաւակնորդ Վազգէն Մանուկեանի մասին, եւ այդ խօսակցութիւններում տրամաբանութիւն կայ: Վազգէն Մանուկեանն ինչքան էլ չաւակնոտ լինի, այնուամենայնիւ նա մեծ փորձ ունի ու հասկանում է, որ իր գնացքը մեկնել է, ուստի բացառուած չէ, որ կարողանայ յաղթահարել Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ ունեցած իր անձնական հակակրանքի խնդիրները:

Սակայն ՀՀ առաջին նախագահի կողմնակիցներ կարծես թէ կարող են յայտնուել եւ խորհրդարանում: Այսպէս, պատահական չէ, որ բազմափորձ Գալուստ Սահակեանը բաւականին դրական է արտայայտուել «Օրինաց երկրի» անցած քաղաքական ճանապարհի մասին՝ ՕԵԿ-ին որակելով «փորձառու կուսակցութիւն», «քաղաքական ճանապարհ է անցել, ունի խորհրդարանական աշխատանքի աւանդույթներ» եւ այլն: Իսկ «Ժառանգութեանը» նա պիտակում է «նորեկներ», որոնք «խորհրդարանում միանգամից մի ձանձրալի միջավայր ընկան» եւ «յոզնեցրին բոլորին»: Եթէ օբիեկտիւօրէն մօտենանք, ապա կը տեսնենք, որ «Ժառանգութիւնը» նոյն ՀՀԿ-ի հետ վարուում էր առաւել քաղաքավարի, քան ՕԵԿ-ը, ուստի գնահատականների այդ տարբերութիւնն ունի խորքային քաղաքական դրդապատճառ:

Իսկ այդ դրդապատճառը բաւականին պարզ է. Արթուր Բաղդասարեանն ինքը մտադիր է մասնակցել նախագահական ընտրութիւններին, համարում է «Եւրոպացիների ֆաւորիտ» ու դժուար թէ որոշում կայացնի սատարելու Լեւոն Տէր-Պետրոսեանին: Իսկ Բաճի Յովհաննիսեանը օրէնքով չի կարող առաջադրուել ՀՀ նախագահ-

հի թեկնածու ու թէեւ նոյնպէս ունի անձնական հարթութեան խնդիրներ ՀՀ առաջին նախագահի հետ, սակայն աշխարհաքաղաքական հայեցքների առումով նրանք օբիեկտիւօրէն գաղափարակիցներ են: Ուստի, չպէտք է բացառել, որ Բաճիին նոյնպէս կը սատարի Լեւոնին:

Իսկ եթէ չիշենք, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի չափազանց ուժեղացման դէպքում ինչքան գործարար պատգամաւորներ կան, որ կարող են յանկարծակի դառնալ նրա կողմնակից, ապա կարող ենք արձանագրել, որ ՀՀԿ-ն եւ ՀՀԿ-ի թեկնածու Սերժ Սարգսյանի աչքի առաջ ուրուագծուում է եւ հնարաւոր «նդծաւանջը»: Դրսում ԱՄՆ-ի աջակցութեամբ արտախորհրդարանական «նարնջագոյնները» սկսում են ճօճել իշխանութեան նաւը, նրանք ստանում են «Ազատութիւն» ռադիոկայանի, իսկ հետագայում միգրացի նաեւ «Եւրոնիւզ» եւ CNN-ի հօր տեղեկատուական աջակցութիւնը, ԱԺ-ում էլ մեծ քանակով պատգամաւորներ մէկ գիշերուայ ընթացքում ստեղծում են «լեւոնական» պատգամաւորական խումբ: Ու պարզ է, որ այդ՝ թէկուց ընդամէնը 20 տոկոս հաւանականութիւն ունեցող սցենարի դէմն առնելու համար Սերժ Սարգսյանն իրեն պէտք է դրսեւորի ոչ թէ որպէս լաւ, այլ գերազանց «շախմատիստ»:

Այնուամենայնիւ, համարձակուենք կանխատեսում անել. ՀՀԿ-ն իր դիրքերի թուլացմանը միտուած գործընթացները չի հանդուրժելու եւ կրկին մերժուած օրինագծերը բերելու է խորհրդարան, եւ այս անգամ Գալուստ Սահակեանի ասածով՝ «հարցը 20 րոպէսում լուծելու են»:

ՅՈՎՃԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ
«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՋԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

33-ԱՄԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՄՊԱՆՆԵԼ ԵՆ ԶՕՐ ՇԻՐԱՔԱՐԻ ՄՕՏ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Յուլիսի 7-ին, ժամը 20.50-ին, ոստիկանություն Մաշտոցի բաժնում հաղորդում է ստացուել, որ Սիլվիանյան թաղամասի գերեզմանատանը կրակոցների ձայներ են լսուել: Մեկնած օպերատիվ խումբը նշուած գերեզմանատանը յուղարկաւորուած Աշոտ Վարդանեանի շիրմաքարի մօտ յայտնաբերել է 1974 թ. ծնուած Արտաւազը Վարդանեանի, իսկ գերեզմանի ցանկապատի մօտ՝ 1977 թ. ծնուած Վարդան Մելիքեանի դիակները:

Պարզուել է նաեւ, որ նշուած վաչրից հրազէնային վնասուածքներով «Մալաթիա» բուժկենտրոն է տեղափոխուել Գրիգոր Ստեփանեանը, որը հիւանդանոցում մահացել է:

Դէպքի վաչրում կայանուած Ա. Վարդանեանին պատկանող «Ֆորդ-էքսպլորեր» մակնիշի աւտոմեքենայի սրահի ետեւի նստարանին յայտնաբերուել եւ աւգրաւ-

ուել է «Սայգա-Մ4» տիպի 7.64 տ/չ ահուսաւոր որսորդական հրացան: Հանգամանքները պարզուած են: Քննուելու վարում է Աջափնեակ եւ Դաւիթաշէն համայնքների դատախազուելուինը:

Աւելացնենք, որ Արտաւազը Վարդանեանը 2006թ Մարտի 4-ին սպանուած՝ «Քաղցրիկ» սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութեան տնօրէն Աշոտ Վարդանեանի որդին է:

Աշոտ Վարդանեանը սպանուել էր Սայաթ-Նովա փողոցի թիւ 37 շէնքի մօտ՝ գլխին եւ կրծքավանդակին արձակուած կրակոցներից: Ի դէպ, Աշոտ Վարդանեանի անուը կապուած էր այս տարի Մայիսի 9-ին «Պանդոկ» ռեստորանի մօտ սպանուած Ստեփան Վարդանեանի հետ, որի սպանութեան գործով Լեւոն Գուլեանը հրաւիրուել էր հարցաքննութեան եւ դեռեւս չպարզուած հանգամանքներում մահացել:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԶԼՍ-ՆԵՐԸ ՎԵՐԱՅՍԿՈՒԵԼ ԵՆ ՅԱՏՈՒԿ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Երեւանի մամուլի ակումբը, Բաց հասարակութեան ինստիտուտը եւ «Թիմ» հետազոտական կենտրոնի ներկայացուցիչները այսօր հրապարակեցին անցած խորհրդարանական ընտրութիւնների ընթացքում լրատուամիջոցների գործունէութեան ուսումնասիրութեան արդիւնքները՝ հանգելով եզրակացութեան, որ դրանք վերահսկուել են «կոնկրետ կառուցների կողմից»:

«Միանշանակ զգացուած էր, որ կայ հեռարձակուող լրատուամիջոցների գործունէութեան համակարգում մէկ կենտրոնից», - ասաց Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը: - «Ընտրութիւններից առաջ՝ ամբողջ 2006 թուականի ընթացքում մենք ունէինք մի շարք քաղաքական գործիչներ եւ կուսակցութիւններ, որոնք ամբողջովին

արհամարհուած էին առաջատար հեռարձակուող լրատուամիջոցների կողմից»:

Նրա խօսքերով, այդ արգելքները «անմիջապէս վերացան» Հայաստանում դիտորդական առաքելութիւնների յայտնուելուն պէս. - «Դա էջը կարող լինել համաձայնեցուած որոշում բուն լրատուամիջոցների: Դա հաստատ ինչ-որ տեղից իրենց յուշել էին»:

Նաւասարդեանի ենթադրութեամբ՝ դա, առաջին հերթին, «նախագահական ապարատն է՝ իր մամուլի ծառայութիւնով, եւ Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովը»: - «Այսինքն՝ այն մարմինները, որոնք մշտապէս աշխատում են հեռարձակուող լրատուամիջոցների հետ եւ որոշակի խորհուրդներ կամ հրահանգներ են տալիս»:

ՈՒՐԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Ռոբերդ Քոչարեանի խորհրդական Գառնիկ Իսազուլեանը Յուլիսի 10-ին Ուրբաթ ակումբում յայտարարել է, որ Հայաստանի քաղաքական գործիչների շրջանում ամենամեծ վարկանիշն ունի Ռոբերդ Քոչարեանը: Ըստ Գառնիկ Իսազուլեանի, նոյնիսկ այն պարագան, որ նախագահը պէտք է հեռանայ պաշտօնից, չի նուազեցնում նրա վարկանիշը: Ռոբերդ Քոչարեանի խորհրդականը վարկանիշը պարզել է իր ղեկավարած քաղաքական հետազոտութիւնների ինստիտուտի սոցհարցումների միջոցով: Ինստիտուտը սնուած է պետբիւջէից եւ գործում է նախագահին աւելնելով:

«Նոյնիսկ երբ որ ասում ենք՝ ում կ'ուզենայիք տեսնել հանրապետութեան յաջորդ նախագահ, մարդիկ իմանալով, որ հանրապետութեան նախագահը չի կարող գնալ երրորդ ժամկէտ, միեւնոյն է, Ռոբերդ Քոչարեանն ունի ամենաբարձր վարկանիշ», նշում է Գառնիկ Իսազուլեանը: Նա ասում է, որ Ռոբերդ Քոչարեանի վարկանիշն ամենաբարձրն է նաեւ որպէս պետական ու քաղաքական գործիչ: Այսինքն, Սերժ Սարգսեանը, ով չաւակնում է լինել ՀՀ յաջորդ նախագահը, փաստորէն գիշում է Ռոբերդ Քոչարեանին: Գառնիկ Իսազուլեանն այդ մասին հարցին ուղիղ պատասխանելու համարձա-

կութիւն չունեցաւ եւ նշեց, այսինքն կրկնեց, թէ Ռոբերդ Քոչարեանի վարկանիշն ամենաբարձրն է:

Վարկանիշի բարձրութիւնը Գառնիկ Իսազուլեանը պայմանաւորում է Ռոբերդ Քոչարեանի իշխանութեան օրօք տեղի ունեցած զարգացումով, ինչը 90 տոկոսը իսազուլեանի համարում է Ռոբերդ Քոչարեանի շնորհը: Սակայն նա յայտարարում է, որ Ռոբերդ Քոչարեանը երրորդ ժամկէտ չի գնաւ եւ այդ մասին նախագահն ինքը սպառնիչ պատասխան տուել է: «Գուցէ, օրինակ, եթէ ինձ, անձամբ իմ տեսակէտը հարցնէիք, ես ուրիշ բան կ'ասէի: Ես կ'ուզենայի, որ այն գործը որ սկսուել է, շարունակուի: Ես դրա մասին բազմաթիւ անգամներ յայտարարել եմ», ասում է Գառնիկ Իսազուլեանը: Քանի որ նա բազմաթիւ անգամներ յայտարարել է նաեւ, որ Հայաստանի նոր նախագահի արժանի թեկնածուն Սերժ Սարգսեանն է, ապա լրագրողները հարցրին իսազուլեանին, թէ Սերժ Սարգսեանն իր յատկանիշներով նմա՞ն է Ռոբերդ Քոչարեանին: Գառնիկ Իսազուլեանի պատասխանը առաւել քան զուսպ էր: Նա յայտարարեց, թէ Սարգսեանն ու Քոչարեանը նոյն թիմից են, իսկ որակների համեմատութեան առումով, ըստ Գառնիկ Իսազուլեանի, պէտք է ժամանակից առաջ ընկնել, կեանքը ցոյց կը տայ:

ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆԻ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ այն հանգամանքին, որ անցած եօթ ամիսների ընթացքում մամուլը բազմիցս անդրադարձել է մեր դէմ յարուցուած այս գործի էութեան քաղաքական լինելու փաստին, սակայն, մինչ օրս քաղաքական տարբեր տրամաչափի գործիչներ, հիմնականում իշխանամէտ, փորձուած են կասկածի տակ առնել այդ փաստը եւ սպասում դատարանի վճռին, յոյս ունենալով, որ անպայման կը հաստատուի յանցակազմի առկայութիւնը մեր գործունէութիւնում:

Նկատի ունենալով վերոյիշեալ երեւոյթը, մենք մի անգամ եւս յայտարարեալ ենք, որ մեր նկատմամբ կատարուող բռնութիւնը ունի միայն ու միայն քաղաքական դրդապատճառներ եւ առաջարկում

ենք քաղաքական-հասարակական ուժերի ներկայացուցիչներին, այս դատաքննութեանը գուզընթաց, կազմակերպել հասարակական դատ, նրանում ընդգրկելով հնարաւորինս հեղինակութիւն վայելող մարդկանց ու այս վիճակին զիտակ գործիչների: Օրինակ, շատ լաւ կը լինէր, եթէ այս գործը գլխաւորէր յայտնի այլախոհ, ազգային գործիչ Պարոյր Հայրիկեանը: Յանկալի է, որ այդ դատական լսումներին հրաւիրուէին ու մասնակցէին իշխանամէտ այնպիսի գործիչներ, որոնք հաւատում են այսօրուայ իրաւական համակարգին: Մենք պատրաստ ենք Ձեզ տրամադրելու այս գործի հետ առնչուելու ինչ ունեցող բոլոր նիւթերը (փաստաթղթերը), միաժամանակ պատասխանելու ցանկացած հարցերի:

ԱՐԱՐՈՆ ԱՂԻԲԵԿԵԱՆԸ ՆԵԱՐԴԱՅՆԱՑԱԾ ԷՐ ՈՒ ԼԱՐՈՒԱԾ

Հայաստանի Հանրապետութիւնում վերջին 17 տարուայ բոլոր կեղծուած ընտրութիւնների արդիւնքները ճիշդ կանխատեսած սոցիոլոգ Ահարոն Աղիբեկեանը վերջին ամիսներին զբաղուած է Լեւոնային Ղարաբաղի նախագահական ընտրութիւնների արդիւնքները գուշակելով: Յուլիսի 6-ին Ստեփանակերտի, 6 շրջկենտրոնների եւ 11 գիւղերի 700 բնակիչների շրջանում Ահարոն Աղիբեկեանը եւ նրա օգնականները անցկացրել են երկրորդ հարցումը, որի արդիւնքները Երեւանում լրագրողներին ներկայացուցին Յուլիսի 9-ին: Ահարոն Աղիբեկեանին օգնել է Արցախի Ազատամարտիկների Միութեան Երիտասարդական թեւը: Իսկ Արցախի Ազատամարտիկների Միութիւնը ԼՂՀ նախագահի թեկնածու Բակո Սահակեանին աստարողների շարքերում է: Բացի այդ, տեղեկութիւններ կան, որ հարցաթերթիկները լրացուել են փողով: Այսքանից յետոյ, որքանով են հաւաստի նրանց անցկացրած հարցման արդիւնքները, դժուար է ասել: Իսկ Ահարոն Աղիբեկեանը առաջարկում է ցանկութեան դէպքում չհամաձայնուել հարցման արդիւնքների հետ:

Լրագրողների հետ հանդիպմանը Ահարոն Աղիբեկեանը եկաւ բաւականին նեարդայնացած եւ ողջ ընթացքում լարուած էր: Ահարոն Աղիբեկեանը էջը կարողանում պատասխանել լրագրողների մի շարք հարցերի, որոնք վերաբերում էին նախագահի թեկնածու Բակո Սահակեանին: Այդ հարցերը, հաւանաբար, հուսից հանեցին Ահարոն Աղիբեկեանին, եւ նա նախ յայտարարեց, որ ճիշդ է, Բակո Սահակեանը հրապարակային գործիչ է, բայց Բակո Սահակեանին մարդիկ ճանաչում են,



Բոլոր կեղծուած ընտրութիւններում արդիւնքները միշտ միշտ կանխատեսող սոցիոլոգ Ահարոն Աղիբեկեան...

որովհետեւ մասնակցել է կարգաւորման բանակցութիւններին, եղել խրամատներում: Լրագրողները սոցիոլոգին հակաճառեցին, որ նրա այս վերջին երկու յայտարարութիւններն իրականութեանը չեն համապատասխանում: Ահարոն Աղիբեկեանը արդէն վերջնականապէս կորցրեց իրեն եւ իրականութեան զգացումը եւ անցաւ անձնական վիրաւորանքներին, սկսեց խօսել «արա»-ով, այդպէս էլ չպատասխանելով իր, մեղմ ասած, տարօրինակ հարցման վերաբերել իրեն ուղղուած բազմաթիւ հարցերին:

Այս ընթացքում Ահարոն Աղիբեկեանը հասցրեց նոր բացայայտումներ անել: Օրինակ, ասաց, որ ԼՂՀ նախագահի ընտրութիւններին մասնակցող դիտորդներով, ինչպէս իրենով, զբաղուած է Արցախի Ազատամարտիկների Միութիւնը, որը Բակո Սահակեանի թիմի մի մասն է: Ասաց նաեւ, որ Բակո Սահակեանի լայն կապերը, կամ որ նոյնն է՝ վարչական ռեսուրսն է դեր խաղալու:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԿՈՂՄ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՄ

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը կողմ է ընդդիմադիր լայն միասնական դաշտ ձեւաւորելուն եւ նման արժանաւորներ շատ կան, յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Ստյոպա Սաֆարեանը: «Ժառանգութեան» նախագահ Բաֆֆի Յովհաննիսեանի հնարաւոր առաջադրման հարցի մասին խօսելիս բոլորն են չիշում, որ ըստ պաշտօնական փաստաթղթային ձեւակերպումների, Բաֆֆի Յովհաննիսեանը ՀՀ քաղաքացի է 2001 թուականից՝ չունի նախագահ ղառնալու համար նուազագոյնը 10 տարուայ ՀՀ քաղաքացիութիւն: «Նրա քաղաքացիութիւնը կամայականութիւնների դաշտում չի հերիքում, օրինականութեան դաշտում լիովին բաւարարում է», յայտարարեց Ստյոպա Սաֆարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԱՏՐՊԵՅՅԱՆՆ ՈՒ ԶԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՆԷ ՊԵՏՔ Է ՅԱՐԳԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Երկիրը չի զարգանալ եւ չի բարգաւաճի առանց ԵՆԻՒ-ի ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների եւ օրէնքի գերակայութեան հիմնարար սկզբունքները հաշուի առնելու տարածաշրջան կատարած այցի աւարտին Պաքու յայտարարել է ԵՆԻՒՎ նախագահ Ռենէ Վան Դեր Լինդենը: Նա մասնաւորապէս կարեւորել է ազատ եւ արդար ընտրութիւնների անցկացումը, որոնք ժողովրդավարութեան հիմքն են: Նա շեշտել է 2008թ Ատրպէյճանի նախագահի ընտրութիւնների՝ ԵՆԻՒ չափանիշներին համապատասխան անցկացումը՝ յոյս ունելով, որ դրանք որակապէս կը տարբերուեն 2005թ խորհրդարանական ընտրութիւններից: Նա կոչ է արել երկրի իշխանութիւններին՝ ակտիւացնել համագործակցութիւնը ԵՆԻՒ կառուցների հետ՝ բարելաւելու համար ընտրական օրէնսդրութիւնը, մասնաւորապէս ընտրական յանձնաժողովների եւ դիտորդների գործառնությունների եւ իրաւունքների յստակացման առումով: ԵՆԻՒՎ նախագահը ընդգծել է, որ յատուկ ուշադրութիւն դարձուի քաղաքական պատճառով բանտում գտնուող լրագրողների եւ այլոց խնդրին: Վաստառողները, ըստ նրա, պէտք է ազատ արձակուեն՝ մարդասիրական նկատառումներով:



ԵՆԻՒՎ նախագահ Ռենէ Վան Դեր Լինդեն

Ըստ նրա, իրավիճակը մնացել է նոյնը, ինչպէս նշուած է ԵՆԻՒՎ 1416 (2005) բանաձեւում, եւ «Ատրպէյճանի տարածքի զգալի մի մասը դեռեւս գրաւուած է Հայաստանի զօրքերի կողմից»: Նկատելով, որ չկա չարաբերութիւնների բարելաւում իր 2005թ այցից յետոյ, Ռենէ Վան Դեր Լինդենը ասել է, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը պէտք է յարգեն ԵՆԻՒ առջեւ ստանձնած իրենց պարտաւորութիւնները: Ռենէ Վան Դեր Լինդենը նաեւ ասել է, որ ԵՆԻՒՎ-ն կը շարունակի աջակցել Ատրպէյճանին՝ մոնիտորինգի միջոցով երկխօսութիւն հաստատելով ԵՆԻՒՎ եւ Ատրպէյճանի իշխանութիւնների միջեւ:

ԵԱՀԿ ԽՎ-Ն ՍԱՏԱՐՈՒՄ Է «ՍԱՌԵՑՈՒԱԾ» ԶԱԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԶԱՆՔԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ) Կիեւում աւարտուած 16-րդ նստաշրջանի ամփոփիչ հռչակագրում աջակցութիւն է յայտնել կազմակերպութեան տարածքում «սառեցուած» հակամարտութիւնների կարգաւորման ջանքերին: Փաստաթղթում, որը տեղադրուած է ԵԱՀԿ ԽՎ-ի պաշտօնական կայքէջում, խորը մտահոգութիւն է արտայայտուած «ԵԱՀԿ-ի ընդգրկած տարբեր տարածաշրջաններում, մասնաւորապէս, Ատրպէյճանի Հանրապետութիւնում, Վրաստանում եւ Մոլդովայի Հանրապետութիւնում չզարգացող հակամարտութիւնների», ինչպէս նաեւ կազմակերպութեան անդամ երկրների միջեւ շրջափակումների եւ սահմանների փակ մնալու կապակցութեամբ:

ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովը իր աջակցութիւնն է յայտնում «Մոլդովայում եւ Վրաստանում «սառեցուած հակամարտութիւնների» խաղաղ կարգաւորման բոլոր ջանքերին՝ այդ երկրների տարածքային ամբողջականութեան եւ 1999 թուականի Մտամբուլեան պարտաւորութիւնների լիակատար իրականացման սկզբունքների հիման վրայ»: Փաստաթուղթը նաեւ զգուշացնում է որոշ հակամարտութիւններ որպէս այլ հակամարտութիւնների կարգաւորման նախադէպ օգտագործելու դէմ: Մինչեւ ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի 2008 թուականի նստաշրջանը վեհաժողովի նախագահ է վերընտրուել շուեդ խորհրդարանական Գորան Լենմարկերը:

ԶԱՅ ԳՈՐԾԱՐԱՐԸ ՆԵՐԴՐՈՒՄ Է ԱՆՈՒՄ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅ»: Թուրքական Petkim նաւթաքիմիական ընկերութեան բաժնետոմսերի հսկիչ փաթեթի՝ 51 տոկոսի սեփականատէն է դարձել Ղազախստանում գործող Transcentral Asia Petrochemical հոլդինգը, որի երէք հիմնական գործընկերներից մէկը՝ որպէս ֆինանսական ներդրող, ռուսաստանցի հայ գործարար Ռուբէն Վարդանեանի գլխաւորած «Տրոյկա Դիալոգ» ընկերութիւնն է: Ինչպէս երէկ մրցութից յետոյ կայացած ասուլիսում յայտնել են Transcentral Asia Petrochemical-ի ներկայացուցիչները, իրենց միւս երկու գործընկեր ներդրողներն են Ղազախստանում նաւթային բիզնեսով զբաղուող Caspi Neft ընկերու-

թիւնը եւ Industrial Group Eurasia ներդրումային ընկերութիւնը: Turkish Daily News-ի վկայութեամբ, ղազախստանեան հոլդինգը Petkim-ի բաժնետոմսերի հսկիչ փաթեթի համար առաջարկել է 2 միլիարդ 50 միլիոն դոլար, ինչը 10 միլիոնով գերազանցում էր մրցութում Transcentral Asia Petrochemical-ի հիմնական մրցակցի՝ Socar&Tucas-Injaz ընկերութեան առաջարկը: 38-ամեայ Ռուբէն Վարդանեանը «Տրոյկա Դիալոգ» ներդրումային ընկերութեանը միացել էր 1991 թուականին, երբ դեռ 22 տարեկան էր: 10 տարուայ ընթացքում նա դարձել է ընկերութեան գլխաւոր գործադիր տնօրէն, ապա՝ նախագահ:

«ԿՈՍՈՎՈՆ ԿԸ ԼԻՆԻ ՆԱԽԱԴԵՊ ԼՂՅ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԶԱՄԱՐ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մինչ եւրոպացի մի շարք պաշտօնեաներ, այդ թւում ԵՆԻՒՎ նախագահ Թերի Դեւիսը, յայտարարում են, որ Կոսովոյի անկախութեան հնարաւոր ճանաչումը չի կարող կիրառուել որպէս նախադէպ միւս հակամարտութիւնների լուծման համար, ԵՆ նախարարների կոմիտէի նախագահ, Սերբիայի նախագահ Բորիս Թադիչը հակառակ կարծիքին է:

Ստրասբուրգում, ԵՆԻՒՎ նիստերի դահլիճում, Եւրախորհրդի քաղաքական դասընթացների ամառային համալսարանի ունկնդիրներին ներկայացնելով հակամարտութեան լուծման հնարաւոր ուղիները, Թադիչը գուզահեռ անցկացրեց Կոսովոյի եւ յատկապէս Լեւնային Ղարաբաղի միջեւ: Ապա աւելացրեց Հարաւային Կովկասի միւս հակամարտութիւնները: Նա յայտարարեց, որ այդ բոլոր հակամարտութիւնների լուծումը կախուած է լինելու Կոսովոյի խնդրի հանգուցալուծումից:

Բնականաբար, Բորիս Թադիչը խոստացաւ բարձր ինքնավարութիւն Կոսովոյին, բայց միայն Սերբիայի տարածքային ամբողջականութեան սկզբունքի պահպանման շրջանակներում: «Պէտք է խնդրին մօտենալ շատ աւելի զլոբալ, պէտք է մտածել նաեւ միւս հակամարտութիւնների մասին, պէտք է մտածել, թէ ինչպէս է հնարաւոր մնացած բոլորին համոզել այսպիսի լուծման ճանապարհը, ես վստահ եմ, որ Կոսովոն անկախ չի լինի, հակառակ դէպքում բոլորը կը մտածեն անկախութեան մասին, դա կտրուկ կը փոխի իրավիճակը Սեւեռլեան տարածաշրջանում»: Այս յայտարարութեանը Ատրպէյճանի եւ Վրաստանի քաղաքա-

կան դպրոցի ունկնդիրները ողջունեցին բուռն ծափահարութիւններով: Թադիչը յայտարարեց, որ Կոսովոյի խնդրի լուծումը կարող է առաջացնել խնդիրներ բոլոր ոլորտներում եւ յատկապէս էներգետիկ:

Ի դէպ, Բորիս Թադիչը խորհուրդ տուեց հակամարտութիւնների լուծման հարցում չառաջնորդուել պատմութեամբ. պատասխանելով այլաբանացի ունկնդրի հարցականարկին, թէ ինչո՞ւ տեղի ունեցան այլաբանացիների դէմ յայտնի դէպքերը, Թադիչը չի շեցրեց, որ դրան նախորդել էին սերբերի նկատմամբ բռնութիւնները, իսկ դա հետեւել էր այլաբանացիների ջարդերին. այսինքն, անիմաստ է մտնել պատմական իրողութիւնների դաշտ եւ պետք է խնդրը լուծել այս պահին առկայ իրողութիւնները հաշուի առնելով:

«Եթէ անցած դարում մենք ընդգծում էին տարբերութիւնները, այս դարում պետք է շեշտը դնել միաւորող գործոնների վրայ», - ասաց Թադիչը, որն իր խօսքում կարեւորում էր Կոսովոյում եւ Սերբիայում ժողովրդավարութեան զարգացման անխուսափելի անհրաժեշտութիւնը: Իսկ անդրապումը Սերբիայի նախագահի հետ անցկացուեց ԵՆԻՒ քաղաքական դասընթացների ժողովրդավարութեան 2-րդ համալսարանի աշխատանքների շրջանակում, որը տեղի ունեցաւ Յուլիսի 2-ից 6-ը եւ որին մասնակցում էին ԵՆ անդամ 15 երկրների ներկայացուցիչներ:

Նկատենք, որ Բորիս Թադիչը դեռ անցած տարի նոյն՝ ԵՆԻՒ քաղաքական դասընթացների ժողովրդավարութեան համալսարանի ունկնդիր էր, իսկ այսօր արդեն Սերբիայի նախագահը:

ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆՆԱՐԿԵՐԻ ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅ»: «Համանախագահները չեն, որ կարող են պատրաստել նման համաձայնագիր: Նրանք ուղղակի որպէս միջնորդ օգնում են կողմերին տալ համաձայնութիւն այն հարցերի շուրջ, որոնց շուրջ կան տարբերութիւններ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այսօր ասաց Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան պետի պաշտօնակատար Վլադիմիր Կարապետեանը՝ մեկնաբանելով ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գորան Լենմարկերի՝ նախօրէին արած յայտարարութիւնը:

դա իր մօտեցումն է», - նշեց Վլադիմիր Կարապետեանը:

«ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը պատրաստել է շրջանակային համաձայնագիր, որում արտացոլուած են ղարաբաղեան հակամարտութեան կողմերին յուզող բոլոր պահերը», - յայտարարել էր Գորան Լենմարկերը Կիեւում, որտեղ անցկացուած է ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի 16-րդ նստաշրջանը: - «Փաստաթուղթը պատրաստ է երկու երկրների դեկավարների կողմից ստորագրման, եւ մնում է քաղաքական կամք ցուցաբերելը»:

Լեւնային Ղարաբաղի խնդրին Թերի Դեւիսը լրագրողների հետ հանդիպման ընթացքում անդրադարձել է նաեւ Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԻՒՎ) նախագահ Ռենէ Վան Դեր Լինդենը. - «Ինձ համար մեծ հիասթափութիւն էր, որ ես, երկու տարուայ աշխատանքից յետոյ իրական առաջընթացի ականատեսը չդարձայ: Հակառակը՝ ես լաւատես չեի, լաւատես չեմ նաեւ Հայաստանում իմ բանակցութիւններից յետոյ, եւ կը տեսնեմ, թէ ինչ կը լինի Ատրպէյճանում: Անհրաժեշտ է, որ նրանք կարգաւորեն այս խնդիրը՝ յանուն ողջ տարածաշրջանի, երկրների ապագայի համար»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԹԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ 99,5 ՏՈԿՈՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱԳՆ ՅՈՒՎԱԿԻՄԵԱՆ

Այս տարի Մայիսի 12-ին տեղի ունեցած ԱԺ ընտրութիւնները մասնակցութեան թուի շուրջ բազմաթիւ մեկնաբանութիւններ են հնչել:

Այդ կարծիքների գերակշիռ մասն այն մասին էր, որ ընտրողների մասնակցութեան պաշտօնապէս հրապարակուած թիւը՝ շուրջ մէկ միլիոն 391 հազար, ուռճացուած է, եւ իրականում այդքան ընտրող չի մասնակցել ընտրութիւններին: Աւելին, լուրջ հիմքեր կան պնդելու, որ Մայիսի 12-ի քուէարկութեանը մասնակցել է Հայաստանում գտնուող ընտրողներից աւելի շատ մարդ:

Սակայն պաշտօնատար անձինք եւ պետական մարմինները, որպէս կանոն, նման կարծիքներին եւ պնդումներին հակադարձում էին, թէ այդ ամէնն ապացուցող փաստեր չկան՝ առաւել եւս պաշտօնական փաստաթղթերի տեսքով: Այս տեսանկիւնից ուշագրաւ էր ՀՀ տարածքային կառավարման նախարարութեան մի գրաքննչի գործակալութեան պետ Գագիկ Եգանեանի այն յայտարարութիւնը, թէ ՀՀ բնակչութեան 15 տոկոսը արտագնայ աշխատանք գտնելու նպատակով մեկնում է Հայաստանից արտերկիր: Պաշտօնական վիճակագրութեան համաձայն, ՀՀ բնակչութեան թիւը մօտ 3 միլիոն 200 հազար է, այսինքն՝ խօսքը գնում է շուրջ 480 հազար մարդկանց մասին: Այս ցուցանիշը անմիջական առնչուած է ընտրութիւնների տուեալների հետ, քանի որ արտագնայ աշխատանքի մեկնողները տասնութ տարին լրացած, այսինքն՝ ընտրելու իրաւունք ունեցող ՀՀ քաղաքացիներ են: Ըստ 2007-ի մայիսի 12-ի ԱԺ ընտրութիւնների արդիւնքների, ՀՀ ընտրական ցուցակներում ընդգրկուած են շուրջ 2 միլիոն 320 հազար ընտրողներ, որոնցից քուէարկութեանը մասնակցել է մօտ 1 միլիոն 391 հազարը: Պաշտօնական վիճակագրութեան համաձայն, ՀՀ բնակչութեան թիւը 3 միլիոն 222 հազար է: Այսինքն՝ ՀՀ բնակչութեան 72 տոկոսը ընտրողներ են:

ՀՀ ազգային վիճակագրութեան ծառայութեան «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. Յունուար-Դեկտեմբեր ամիսներին» հրա-

տարակութիւնից տեղեկանում ենք, որ 1992-2000 թուականներին Հայաստանից հեռացել է 644 հազար մարդ: Այդ ժամանակ պաշտօնական վիճակագրութեամբ ՀՀ բնակչութեան թիւը եղել է 3 մլն 800 հազար մարդ: 1999-ի մայիսի 30-ի ԱԺ ընտրութիւնների արդիւնքներով, այդ ժամանակ ՀՀ ընտրողների թիւը եղել է մօտ 2 միլիոն 198 հազար:

Ըստ ՄԳ ինտերնետային կայքի պաշտօնական վիճակագրութեան, 2001-2003 թուականներին Հայաստան ժամանածների եւ մեկնածների բացասական հաշուեկշիռը եղել է մօտ 73 հազար մարդ: 2004-2006 թուականներին մեկնածների եւ ժամանածների դրական հաշուեկշիռը եղել է մօտ 36 հազար: Ըստ այդմ, ստացուած է, որ մինչեւ 2007-ը Հայաստանից հեռացել են 681 հազար քաղաքացիներ:

Մինչ թուերի յաջորդ խմբին անցնելը արձանագրենք՝ 3 մլն 800 հազար բնակչութեան պարագայում ընտրողների թիւը 121 հազարով պակաս է եղել, քան 3 մլն 222 հազար բնակչութեան դէպքում, ինչը, մեղմ ասած, աբսուրդ է:

Որպէսզի ստանանք իրական ընտրողների թիւը, մայիսի 12-ին յայտարարուած ընտրողների թուից պէտք է նախ հանենք վերը նշուած 681 հազարը, քանի որ նրանք հիմնականում եղել են չափահաս քաղաքացիներ, որոնք հեռացել են աշխատանք գտնելու ակնկալիքներով: Ըստ այդմ, ստացուած է, որ ՀՀ ընտրողների պաշտօնական թիւը նուազում եւ համում է 1 մլն 639 հազարի: Ըստ ՄԳ վիճակագրութեան, 2007-ի առաջին չորս ամիսներին ՀՀ ժամանած եւ մեկնածների բացասական հաշուեկշիռը կազմել է մօտ 41 հազար: Այս թիւը եւս պիտի հանենք ընտրողների թուից, քանի որ արտագնայ աշխատանքի մեկնողները ընտրողներ են: Ստացուած է՝ ընտրողների թիւը նուազում է մինչեւ 1 մլն 598 հազար: Մեր նիւթի ամենակզբում նշել էինք, որ ըստ Գագիկ Եգանեանի՝ ՀՀ բնակչութեան 15 տոկոսը արտագնայ աշխատանք գտնելու նպատակով մեկնում է արտերկիր: Այսինքն՝ տարեկան ՀՀ եկող-գնացող 1 մլն անձանցից մօտ 450 հազարը արտագնայ աշխատանքի մեկնող-

Շար.ք էջ 17

ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՒՆ

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գորիս քաղաքի հարեւանութեամբ գտնուող Վերիշէն գիւղի փողոցներից մեկի կամարածեւ պարսպի գլխավերում փակցուած «1700-ամեայ քրիստոնեայ Հայաստան» ցուցանակն անձանութներին յուշում է այդ վայրում առկայ քրիստոնէական շինութեան մասին: Խորհրդային կառուցներ Մշակոյթի տունն ու բուժկէտը իրենց ետեւում թաքցրել են մի հետաքրքիր եկեղեցի, որի մասին, տեղաբնակներից բացի, քչերը գիտեն:

Մշակոյթի տան առջեւ ամառային ճամբարի նախապատրաստութիւն տեսնող երեխաները հայեացքներով ուղեկցում են դէպի եկեղեցին շարժուող անձանութներին, այնուհետեւ հետեւում են մեզ: Եկեղեցու շուրջը պտտուելով՝ մենք յամառօրէն նրա ինքնութեան մասին վկայող ինչ-որ բան ենք փնտրում պատերին: Երեխաները, որսալով մեր քննախոյզ ու հետաքրքրասէր հայեացքները, մեզ են փոխանցում իրենց իմացածը՝ «սբ. Հռիփսիմէն 5-րդ դարում կառուցուած միասրահ եկեղեցի է»:

6-րդ դասարանցի Քրիստինէն պատմում է, որ ինքն այդ մասին իմացել է կրօնի պատմութեան իր ուսուցչուհուց, որը Գրիգոր Լուսաւորչի մասին դասն իրենց հետ անցկացրել է այդ եկեղեցում: «Միւսնեայ աշխարհի մասին էինք անցնում, եկել ենք այստեղ, աղօթել: Մենք պապիկներից ենք հետաքրքրուել, նրանք են մեզ պատմել եկեղեցու մասին», - յիշում է Քրիստինէն: 5-րդ դասարանցի Աշխէնը պատմում է, որ ընկերներով շաբաթօրեակին եկել են մաքրել եկեղեցին ու նրա շրջակայքը, բայց այստեղ երբեք մաքուր չի լինում, որովհետեւ հարեւանութեամբ բնակողները ոչ միայն աղտոտում են, այլեւ ոչխարի հոտն են այստեղ արածացնում, ոչխարներն էլ մտնում են եկեղեցի ու աղտոտում:

Եկեղեցու ներսը ոչ միայն անխնամ էր, այլեւ կէսօրուայ տապին ներսում հանգստացող ոչխարի հոտն իր կղանքի հետքերն էր թողել այնտեղ: Երեխաները պատմեցին, որ իրենք եկեղեցու շրջակայքը բարեկարգելու ցանկութիւն ունեն եւ գրաւոր դիմել են Վերիշէնի համայնքապետին, որպէսզի օգնի իրենց ցանկապատելու այն,

այլապէս հնարաւոր չէ ոչինչ անել:

Գորիսում Սիւնիքի թեմական առաջնորդի տեղակալ հայր Աբգարի իմացութեամբ՝ 4-րդ դարի կառուց սբ. Հռիփսիմէն բազիլիկ ոճով կառուցուած եռասրահ եկեղեցի է, նրա մասին աւելին յայտնի չէ: «Մարգպէտի հետ կազմակերպել ենք, որ այդ եկեղեցու համար գիւղապետարանը հողաչատկացում անի, որպէսզի կարողանանք ցանկապատել այն ու խնամել», - տեղեկացրեց հայր Աբգարը:

ՀՀ կառավարութեանն առընթեր Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան գործակալութեան յուշարձանների ու պատմական միջավայրի պահպանութեան եւ օգտագործման բաժնի պետ Սուրէն Շաքարեանն աւելի ստույգ է համարում սբ. Հռիփսիմէ եկեղեցու՝ 6-րդ դարի կառուց լինելը, որը բազմիցս վերակառուցուել է միջնադարում: «Այստեղ արտաքին պատեր են շարուել, եւ եկեղեցին ներփակուել է ուղղանկիւն ծաւալի մէջ, որի հետեւանքով եկեղեցու կամարակապ բացուածքները փակուել են, վերակառուցումները վերագրուած են 9-10-րդ դարերին», - ասում է Ս. Շաքարեանը: Վերջինիս ասելով՝ սբ. Հռիփսիմէի կառուցումը 6-րդ դարին վերագրելը հիմնաւորում է նրանով, որ նոյնատիպ, բայց իր չափերով աւելի փոքր կառուց կա կապանի Արծուանիկ գիւղում, որն իր նախնական տեսքով պահպանուել է: Արծուանիկի եկեղեցու տարիքը յայտնի է՝ 6-րդ դարում գիւղը դառնում է Սիւնիքի թեմական կենտրոն, եւ կառուցում են այդ եկեղեցին:

Սբ. Հռիփսիմէ եկեղեցին գտնուում է ՀՀ կառավարութեանն առընթեր Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան գործակալութեան ենթակալութեան տակ: Պատմամշակութային յուշարձանների պահպանութիւն է իրականացնում նաեւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանման ծառայութիւն» պետական ոչ առեւտրային կազմակերպութիւնը: Երկու կառուցների խնդիրն էլ պատմութեան եւ մշակոյթի անշարժ յուշարձանների ու պատմական միջավայրի պահպանութիւնն է: Չնայած դրան՝ գոր-

Շար.ք էջ 17

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՒ ԵՐԹԱՍ, ԱՄԵՐԻԿԱ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Ո՛ւր կ'երթայ Ամերիկան:
 Խորհրդային Միության փլուզումէն ետք Ամերիկա դարձաւ աշխարհի միակ գերզօր տէրութիւնը, ղեկը կորսնցուցած նաւի մը կը նմանի, որ կը տարուբերի ալեկոծ ովկիանոսի մը մէջ: Այս տխուր, չըսելու համար ողբերգական կացութիւնը, թէ իրեն, Ամերիկային, եւ թէ աշխարհի համար ահաւոր լուրջ մտահոգութեան պարագայ դարձած է:

Առանձին մնալէ ետք, Ամերիկա երկու ընտրութիւն ունէր: Եր-

րօրէն կը մնայ կառչած: Այսօր, գրեթէ ամէնուն ծանօթ է իրաքեան պատերազմի առաջնորդող պատճառներու կեղծ եւ շահախնդիր հանգամանքը, եւ Պուշ-Չէյնի իշխանութեան ուրացումը անոնց եւ «ընթացքը շարունակելու» վճռակամութիւնը ամէն գնով: Եւ այս, հակառակ ամերիկեան Գոնկրէսի եւ ազգային հանրային կարծիքի հաւասարապէս բաժնուած հանգամանքին: Իրաքեան ողբերգութիւնը դարձած է նաեւ Ամերիկայի ողբերգութիւնը, իր բանակայիններու ամէն օր մահերով:

Սկզբունքային գետնի վրայ,

ղեկ խաբկանքներ շրջանէ մը ներս, որուն պատմութեան պէտք է ծանօթ ըլլային իրենք: Պարտադիր կերպով տեմոքրատի հաստատելու ճիգը կրնայ հակառակ արդիւնքներ ունենալ, ինչ որ կը պատահի այսօր Իրաքէն եւ շրջանէն ներս: Ամերիկեան ներկայ իշխանութիւնը, առաւելաբար շահագրգռուած էր քարիւղային եւ այլ տնտեսական հետապնդումներով, որոնք զինք հասցուցին այսօրուայ աւազախրոմին մէջ:

Ի՞նչ ՊԱՏԿԵՐ ԿԱՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՁԷՆ ՆԵՐՍ

Այսօր տխուր է Ամերիկայի ներքին կեանքը: Բաժնուած ժողովուրդ, բաժնուած Գոնկրէս, բաժնուած քաղաքականութիւն, հակադիր Գոնկրէս եւ Սպիտակ Տուն, եւ ասոնցմէ անդին, Ամերիկայի վարկի տկարացում համաշխարհային գետնի վրայ, ինչ որ ճիշտ հակառակը պէտք էր պատահեր Խ. Միութեան փլուզումէն ետք: Գալով Միջին Արեւելեան մարզէն ներս, ամերիկեան քաղաքականութիւնը, բացի Իրաքէն, ուղղակի կամ անուղղակի կերպով ստեղծեց Իրանի հզօրացումը, այնքան մը որ, եթէ Իրաքը փլի, ինչ որ անհաւանական չի թուիր ներկայիս, Իրան կրնայ գրաւել Իրաքի 2/3ը շիի իր կրօնակիցներու օգնութեամբ: Առաւել, իր հովանաւորած «Համաս»ով, Պաղեստինի մէջ, եւ «Հրզպալույս»ով՝ Լիբանանի մէջ, Իրան դարձած է Մերձավոր Արեւելքի ամէնագոյրաւոր ուժը, որուն դէմ Ամերիկան եւ իր կարծեցեալ սիւննի բարեկամները, Եգիպտոս, Ս.

Արաբիա, Յորդանան եւ ուրիշներ, անկարող են դիմադրելու:
 Յիշենք նաեւ անցողակի կերպով, Աֆղանիստանի պարագան, ուր ներկայիս աւելի քան դուռ, գոհեր, եւ թմրանիւթերու արտադրութիւն գոյութիւն ունի քան թալիպանի տիրահազակ օրերուն: Հոն եւս Ամերիկան ահաւոր գոհեր կու տայ ՆԱԹՕ-ի ուժերու կողքին:

Ի՞նչ ԿՐՆԱՐ ԵՒ ԿՐՆԱՅ ԸՆԵԼ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՅՍՕՐ

Պուշի իշխանութիւնը, ըստ երեւոյթին, անկարող է վերանայիլ իր ցարդ հետեւած քաղաքականութեան: Ուրեմն պէտք է սպասել անոր հրապարակէն քաշուելուն, տակաւին 18 ամիսեր կան: Մինչ այդ Ամերիկան կը մնայ գերին իր ընտրած քաղաքականութեան, աշխարհի տարբեր շրջաններէն ներս, ներառեալ եւ յատկապէս Անգլիան, ուր իսլամ ծայրայեղականներ, գաղմանալիօրէն ուսեալ բժիշկներ անոնց մէջ, լծուեցան ահաբեկչական գործունէութեանց: Ամերիկան պիտի, ուշ կամ կանուխ, ստիպուի վերանայելու ոչ միայն իր Իրաքեան քաղաքականութիւնը, այլ՝ այն համաշխարհային պատերազմը գորինք սկսաւ Սեպտեմբեր 11-էն ետք: Ժողովրդային առածը կ'ըսէ. «Վնասին ուրտեղէն որ դառնաս շահ է»:
 Ամերիկան տակաւին բաւականին հզօր է իր ընտրութիւնները ընելու եւ լաւ ընտրութիւններ, որոնք ոչ միայն իրեն, այլ մարդկութեան համար ըլլան օգտակար:
 Կրնա՞նք այս յուսալ Ամերիկայէն:



կու ընտրութենէն ալ առաւել կամ նուազ չափով իր կամքէն կախեալ էր: Որո՞նք էին այդ ընտրութիւնները.

ղեկավարել նաեւ կը նշանակէ նախատեսել, այս պարագային Պուշ-Չէյնի եւ անոնց պատերազմասէր գործակիցները ոչ միայն չկրցան նախատեսել, այլ ուղեցին հետապն-

Օգտագործել իր կարելիութիւնները, որոնք ահաւոր էին եւ գրեթէ անսահման, համաշխարհային կարգ-կանոնի պահպանման, հրէջքի պատուաւոր դերի մը մէջ, հաստատել խաղաղ գոյակցութիւն տարբեր քաղաքակրթութեան միջեւ, ներառեալ աշխարհի տարբեր կրօնները, նկատի առնել աշխարհա-քաղաքական իրականութիւնները, մանաւանդ օգնել Յրդ աշխարհի աղքատ երկիրներուն տնտեսա-քաղաքական օգնութիւն հասցնել, անոնց մօտ առկայ թշուառութիւնն ու ընկերային լուրջ հարցերը լուծելու մտահոգութեամբ, եւ ջանալ ստեղծել, իր երկրէն ներս եւ համաշխարհային չափանիշով, բարոյական մթնոլորտ: Եւ տակաւին շատ մը ուրիշ բաներ, որոնց կարող էր, եւ կարող ալ կը մնայ, իր հզօրութեան պատճառաւ:

Պատահեցաւ սակայն 2001 թուականի Սեպտեմբեր 11-ի ահաբեկչական արարքը Նիւ Եորքի վրայ: Այդ դէպքը անկիւնադարձային նշանակութիւն մը ունեցաւ Ամերիկայի քաղաքական եւ ազգային մտածողութեան վրայ, եւ սկիզբը դրաւ «ահաբեկչութեան դէմ համաշխարհային պատերազմ» ճանչցուած ամերիկեան քաղաքականութեան վրայ, որուն տխուր դրսեւորումները եւ անդրադարձները կը տեսնենք ամէն օր, անցնելով Իրաքէն, մինչեւ Աֆղանիստան, Իրան, Պաղեստին, Լիբանան եւ շատ մը այլ «տաք» տեղեր:

Ի՞նչ ՊԱՏԿԵՐ ԿԱՅ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ՆԵՐՍ

Հետեւեալ տխուր երեւոյթները գոյութիւն ունին ամերիկեան թատերաբեմին վրայ:
 Իշխանութեան մարզէն ներս, կայ Գործադիր Մարմինը, Պուշ-Չէյնի երկեակի առաջնորդութեամբ, առաւելաբար կը կարծուի Տիք Չէյնիի առաջնորդութեամբ, որ ներկայ քաղաքականութեան ծնունդ տուաւ, որուն յամառօրէն եւ յիմա-

DON'T MISS your chance to introduce your businesses or products to thousands of Armenians and non-Armenians in a single day!

RESERVE your BOOTH today for the most anticipated event of the year!

THE ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

on Sunday, September 23, 2007 at the Verdugo Park in Glendale

Ձեր արուեստը, ձեռակերտը եւ արհեստը հազարաւոր մարդկանց ներկայացնելու լաւագոյն առիթը ՄԻ ՓԱՍՅՆԷՔ

ԱՊԱՏՈՎԵՑԷՔ ձեր ԿՐՊԱԿՆԵՐԸ այսօր իսկ, տարուան ամենէն շատ ժողովրդականութիւն վայելող ձեռնարկին

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ-ին

Կիրակի, Սեպտեմբեր 23, 2007 Կլէյնտըյի Verdugo Park-ին մէջ

THE BOOTH SIZE IS 10' LONG AT \$300

To reserve your booth, just fill in this form and mail with your payment to:
 NSCA, AIDF Committee, 440 W. Colorado Blvd., Suite #201, Glendale, CA 91204

NAME: _____
 BUSINESS NAME: _____
 ADDRESS: _____
 PHONE NO.: _____
 EMAIL ADDRESS: _____

**For Inquiries or Faster Service, call:
 (818) 391-7938 or (818) 395-7967**

ԱԶԳԱՅԻՆ

«ՅԵՄՇԻՆ»

ՅՈՒՎԱՆՔ ԹՈՒՔԱԹ

Ծ.Խ. Գրգռաբթի, Յունիս 28, 2007ի, Առաջնորդարանի «Գալալյան» հանդիսարանին մեջ տեղի ունեցավ Յովնան Սիմոնյանի հեղինակած «ՅեմՇին» հատորի գինեծօնը: Ելոյթ ունեցողներու շարքին, Յովսէփ Թոքաթ Գրգռաբթի աշխատասիրութիւնը, որ լոյս կ'ընծայէր Յամշինի իսլամացած հայերու մասին: Իր շահեկանութեան համար կը հրատարակենք Թոքաթի ելոյթը, կարգ մը յապաւումներով:

Յովնանը առաջին անգամ 1985ին իմացաւ համշինայերու մասին, 1997ին որոշեց սկսիլ այս նիւթի շուրջ աշխատանքին որ տեւեց 5 տարի եւ մէկ ամիս: 1998ի ամառը գնաց Համշին ծանօթանալու բազմաթիւ համշիններու եւ մօտէն ստուգել անոնց կեանքը:

Ի՞նչ տեսաւ հոն: Պատմութիւն մը որ թաղուած էր քարադամբանի մէջ Օսմանեան խիստ հսկողութեան տակ: Դիտումնաւոր կերպով ձեռքազատուած են իրենց նախնիներէն ու մանաւանդ թէ մոռացութեան ենթարկուած էր իրենց լեզուն, սովորութիւնները եւ բոլոր մշակոյթը:

Յովնանը այս իրողութեան շառաւիղէն ներս նրբանկատ աշխատանք մը տանելով 417 էջերու պարունակութեամբ այս գեղատիպ գիրքով մեր առջև կը պարզէ «Համշին» առասպելին պատմութեան ծալքերէն դուրս գալը:

ՀԱՄՇԻՆՅԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայերը երկար տարիներ Արաբներու եւ Բիւզանդիոն իշխանութեան տակ ապրելով հանդերձ նախարարները իրենց ուժը կըրցած են պահել, քանի որ անոնք իրենց մէջէն կ'ընտրէին իշխանները: Այս կերպով աւելի հանգիստ կեանք ապահոված են հայ ժողովուրդին:

Երբ դարը հայ մշակոյթին համար վերագործնաբար դար մը եղած է: Դժբախտաբար աւելի վերջ արաբներու արշաւանքները մեծ փաստ հասցուցին հայ ընկերային եւ տնտեսական կեանքին:

Նախ կասեցուցին եկեղեցիներու շինարարութիւնները եւ պարտադրեցին ժողովուրդը կրօնափոխութեան:

Յետոյ արաբները որպէսզի կարենային քանդել հայ ժողովուրդին տնտեսական կեանքը, գործադրեցին ծանր եւ անարդար տուրքերու դադարաւորը: Այս կերպով հայ ժողովուրդի ընկերային եւ տնտեսական կեանքը հետ քայլ առաւ:

500ական թուականներուն 35 ազնուական ընտանիք եւ 22 արքայատոհմ կը հաշուուէր, իսկ 800ական թուականներուն այս թուանշանները կը պակսին 35ի տեղ 22 ազնուական ընտանիք, 22ի տեղ 12 արքայատոհմ:

Դարեր շարունակ Մամիկոնեան ընտանիքը պահած է իր ուժը: Բայց ծրու դարուն Բագրատունիները արաբներու հետ լաւ յարաբերութեան մէջ ըլլալով առաջնակարգ դիրք գրաւած են: Իսկ 9-10րդ դարերուն Արծրունիները գօրանալ սկսած են:

Մամիկոնեանները, արաբներուն հայ ժողովուրդին հալածանքներուն վերջ տալու նպատակաւ 747 թուին ապստամբութիւն մը սկսան: Այդ ժամանակուայ հայ իշխանը Աշոտ Բագրատունին չուզելով մասնակցած էր ապստամբութեան: Ժողովուրդը պահեց քրիստոնէութիւնը: Շրջակայ վանքերը շարունակեցին ձեռագրեր արտադրել: Համշինը նոյնիսկ պահած էր իր առաջնորդարանը:

ՀԱՄՇԻՆՅԻՆԵՐՈՒ ԻՍԼԱՄԱՅՈՒՄԸ ԵՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Օսմանեան արշաւանքներու հետեւանքով համշինայերու դրացիները՝ լազերը շուտով իսլամացան, այս պատճառով լազերու դիրքը գերազանցեց համշինացիներուն:

Այս անհաւասարութիւնը չեզոքացնելու եւ աւելի հանգիստ ու խաղաղ կեանք ունենալու նպատակը պատճառներէն մէկն է որ կը բացատրէ համշինայերու կրօնափոխութիւնը:

2. Քրիստոնեաները բարձր տուրք կը վճարէին, իսլամանալու պարագային այս անարդարութեան կ'ազատէին:

3. Երբ Օսմանեան կայսրութիւնը տկարացաւ, գորապետներ գոյացան եւ անոնց ճնշումներու հետեւանքով համշինները կրօնափոխ եղան:

4. Այս ճնշումներուն տակ ժողովուրդին մէկ մասը իսլամացաւ եւ մէկ մասն ալ տունը տեղը ձգելով փախաւ: Իսլամանալու հոսանքը սկսաւ ծովեզերեայ գիւղերէն բարձրանալով դէպի լեռները: Ատոր համար է որ լեռնայինները աւելի երկար ժամանակ քրիստոնեայ մնացած են եւ պահած են իրենց սովորութիւնները:

5. Համշինէն փախչողներու մեծ մասը հաստատուեցան Գարատէրէ հովիտը: Դժբախտաբար հոն ալ հալածանքները շարունակուեցան եւ

մեծ քանակութեամբ մարդասպանութիւններ եղան:

Համշինցիներու իսլամութիւնը ընտանեկան յետոյ ժողովուրդը երկար ժամանակ պահեց քրիստոնէութիւնը գաղտնորէն: Ատոր համար էր որ զիրենք կը կոչէին կէս-կէս:

Session One 6:00 - 7:00pm
Session Two 7:00 - 8:00pm

The Art Room - AGBU Pasadena Center
2005 E. Broadway Blvd., Pasadena, CA 91104
For more information, please call (626) 794-7942



AGBU / AYA SCOUTS
Glendale / Pasadena Chapter



SCOUTS SUMMER CAMP 2007
Lake Isabella / Kern County
August 6 - 12, 2007

Cubs, Wolfcubs, Juniors & Brownies Ages 7 - 11
Boy Scouts & Girl Scouts Ages 12 - 17

*Join an inner and outdoor
summer camp with the troop!*

"Hike" every Saturday 8:00 - 9:00 pm.
AGBU Pasadena Center
2005 E. Broadway Blvd., Pasadena, CA 91104
For more information, please call (626) 794-7942

AGBU Pasadena Chapter
SUMMER BASKETBALL CLINIC

Learn the game of basketball
*Improve your technique
*Watch NBA and Euro TV

FREE SEMINARS:
Session One July 28 - July 29
Session Two July 30 - July 31

8:00 - 9:00 am 8-10 yr old boys & girls
9:00 - 10:00 am 11-13 yr old boys & girls
10:00 - 11:00 am 13-14 yr old boys & girls

LEVEL ONE FREE SEMINAR
BASKETBALL 1-ONE INCREASE

AGBU Pasadena Center
2005 E. BROADWAY BLVD., PASADENA, CA 91104
2005 4th floor
Room Three 4-8 of the AGBU Center
For more information,
contact the program manager at (626) 794-7942

YOGA CLASSES CONTINUING
For more information, call (626) 794-7942



THE QUALITY AND LOW COST!



100-1000 LEVEL PLAN
NEW STUDENT ENROLLMENT GRADES 9-12
Sponsored by Young Adults College Preparatory Program
For more information contact your
local chapter with the program, please call (626) 794-7942

An Unprecedented Art Show in Southern California!
NINE CONTEMPORARY ARTISTS FROM ARMENIA
September 28-30, 2007 - Russian Hall, AGBU Center, Pasadena

AGBU SPONSOR



2005 E. BROADWAY BLVD. PASADENA, CA 91104 TEL: (626) 794-7942

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՌԻԵԱՆԻ ՆՈՒԱԳԱԽՄԲԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆԳԻՆԷՄՈՒՐԱՏԵԱՆ-ՔԷՇԻՇԵԱՆ

Ապրիլ 25ի գիշերը, Ալէքս համեզասարհի մուտքը խոնուած էր երաժշտասէրներով: Մանսուրեանի երրորդ նուագախմբային երաժշտութիւնը պիտի ներկայացուէր, մենակատարութեամբ՝ «Տիլիջան» սենեկային երաժշտութեան գեղարուեստական ղեկավար սիրուած ջութակահար՝ Մովսէս Պողոսեանի եւ Նիւ Եորքէն միջազգային ճանաչում վայելող ալտահար (viola), Քիմ Քաշքաշեանի:

Տիգրան Մանսուրեանի երաժշտական նորագոյն արտայայտչամիջոցները, մտածողութիւնն ու ձեւերը ենթարկած է իր ինքնատիպ գրելատճին, ազգային խոր ակունքներու հանդէպ ունեցած իր իւրօրինակ պատկերացումներուն: Անոր երաժշտութիւնը գոյներու անասմանութիւն է, գոյներ՝ ալյազանութեամբ, գոյներ՝ երանգներու եւ լոյսի խողի մէջ, խայտաբղետ կեանքի գոյներ: Գեղարուեստական իտէպն է զգացումներու ուժանտիկական շարուածութեանը հակադրել զուսպ յուզականութեամբ, մտքի յստակութեամբ եւ մասերու ներդաշնակ հաւասարակշռուածութեամբ:

Նկարագիրը բարդ է եւ հակասական՝ իր ոճական բազմազանութեամբ:

Ծիսական բնոյթով «Թովէմ»ը հմայիչ, հետաքրքրական եւ խորհրդաւոր գործ է: 15 նուագարաններու միաձուլ նուագը ազդեցիկ է:

Լարային, փայտեա-պղնձեայ փողային մենանուագողներ կարծես աղօթքի տողեր կը մըմնջային լուռութեան մէջ, իւրաքանչիւրը միահիւսուելով միւս նուագարաններու հետ: Կոնտրապասի 5 ուժգին հարուածները երկը բարձրակէտին հասցուց:

Ջութակի թիւ 2 «Կոնցերտ»ը ձօնած է ընկերոջ ջութակահար՝ Լեւոն Չիլինկիրեանին, որը առաջին անգամ ներկայացուած է Շուէտի «Camerata Nortica» համոյթի կողմէ, առաջնորդութեամբ եւ մենակատարութեամբ՝ Լեւոն Չիլինկիրեանի: 4 «Խոհական Երգեր» խորագրով Concertor մեղեդիական, խորհրդաւոր փիլիսոփայական, պարզ յորինուած բով խորունկ գործ է: Առանց ընմիջումի պատկերաւոր թատրոն էր, պարզութիւնը՝ բարդ տիտուր մահուան բարձրակէտին հասցնելով: Զգացական, զուսպ են, մտայնացումը յստակ եւ մասերը ներդաշնակ: Ծայրայեղ զգացումն քային գործ է:

Մ. Պողոսեան լարուած ծայրաստիճան զսպուած կապակցուած ձայնելէջները մարգարտանման վճիտ էին: Երգային աղօթքի նման կը մըմնջար լուռութեան մութին մէջ, մարմինս սարսուաց պատկերը երեւակայելով: Մենանուագին ընկերակցող լարայիններու կամիթաւոր նուագը սրտածմլիկ էր, Պողոսեան այս դժուար կտորին մէջէն նաւարկեց անբռնազբօս վերթուղութեամբ սահուն հիւթեղ ձայներով: Ալտը (viola) ջութակին մեծ,

ջերմ, արտայայտիչ հնչողութեամբ, լարային նուագարաններու ընտանիքի անդամ է: 1590ին ստեղծուած է ջութակի որպէս օժանդակ, յենարան գործիք:

Աւելի հազուադէպ է որպէս մենակատարային նուագարան: Շատ քիչ մենանուագային գործեր գրուած է Ալտի համար, թէեւ ունի ինքնատիպ, խոր, ջերմ եւ արտայայտիչ հնչողութիւն, գերծ է ջութակի վիրտուոզային փայլէն, սակայն ձայնի խոր հոգեբանական ազդեցութիւնը զօրաւոր է:

1995ին Քիմ Քաշքաշեանի առաջարկով, Մանսուրեան յորինեց Ալտի «Կոնցերտ»ը 18 լարայիններու ընկերակցութեամբ եւ իրեն ձօնեց գործը: Ներքին ճնշումով հերոսի ցաւը, տրտունջը բնութագրող ստեղծագործութիւն է: Երկու մասերէ բաղկացած առանց դադարի շարունակական ամբողջութիւն է: Պարայնութեան տարրերով սկսուած նուագը, զարգանալով, յուզումին հակադրելով, նուագախումբի զօրաւոր նուագը լարուածութիւնը զգալիանկէտին հասցուց: Ալտի մենանուագը երկրորդ մասին խոր յուզախառն զգացումներով ջերմ նուագ ցուցաբերեց: Ամբողջ երկը հիանալի միահիւսուած է իրար մէջ: Քնարական մեղանուշ միջոցաւոր, զգացմունքային ձայնելէջներ, խորունկ ցաւ եւ ճնշում: Քաշքաշեան երաժշտական է, հիանալի թէքնիք, զօրաւոր անհատականութիւն եւ զգայուն սիրտ ունի:

Մանսուրեանի այս «Կոնցերտ»ը ամբողջական է, յուզումնային, ձեւի եւ արտայայտչական առումով: Ի գու չէր որ, «Grammy» մրցանակաբաշխութեան գնահատուած է, որպէս ժամանակակից լաւագոյն սետրծգործութիւն, Մոսկուա: Երկու «Կոնցերտ»ներու միջեւ լարային նուագախումբը նուագեց «Testament» խորագրով կարճ գործը, յորինուած որպէս խմբերգ, Աւետիք Իսահակեանի «Ալագեագի Լանջերում» բանաստեղծութեան վրայ 2004ին:

Առաջին անգամ ներկայացուած է Աւետիք Իսահակեանի ծննդավայր Գիւլմըրի մէջ (խմբերգ):

Ձեր երեւակայութեան կը ձգեմ երաժշտութեան տրամադրութիւնը եւ ձգած ներգործութիւնը:

Փայլուն, հետաքրքրական, նորութիւններ սորվելու համերգաշարք էր: Ոչ դիւրահասկնալի բոլորը, բայց զգալի էր իրական «Մեծութիւն»ը եւ նուաճումները Մանսուրեանի մտածողութեան:

Վաչէ Պարսումեան բարձր գնահատանքի արժանի է, այդքան բարդ, պահանջկոտ երկերուն ընտենալանուն եւ հմտորէն մեկնաբանելուն, անսայթաք ղեկավարելով բոլոր ստեղծագործութիւնները:

Մանսուրեանի համար պէտք էր ցնծութեան խնձոյք ըլլար այս առիթը: Արուեստագէտը ի՞նչ կ'ուզէ...:

Ճանաչում, գնահատանք, հետաքրքրութիւն: Որո՞ւ համար կը ստեղծագործեն...: Նախ իր ժողովուրդին եւ ապա համայն մարդկութեան, ճաշակները նրբացնելու, Աստուծոյ ստեղծած գեղեցկութիւնները վայելելու ու փառք տալու:

Մի քանի օր հոգեփոխութիւն ունեցանք:

Շնորհակալ ենք բոլոր հովանաւորողներուն, մտայնացումներուն կազմակերպիչներուն եւ մասնակցող արուեստագէտներուն: Մեծագոյն գնահատանքը Տիգրան Մանսուրեանին եւ Վաչէ Պարսումեանին:



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՄԵՂԵԻՆ ԱԻԵՐՆԵՐԸ ՍՈՒՏԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՐԿԱՐԱ՞Ր Է ԹԵ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔՀՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Ո՞ր պարկեշտ մարդը՝ կրնայ ճշգրիտ պատասխան մը տալ, այս պարզ ու հրատապ հարցումին եւ առանց վերապահութեան խոստովանել, թէ իր ամբողջ կեանքի ընթացքին սուտեր չէ խօսած ու խաբած իր կինը կամ ամուսինը, իր ընկերը կամ զօրակիցը, իր սիրուհին կամ սիրահարը:

Կրնամ ըսել, առանց ճշմարտութեան դէմ մեղանչելու, թէ մարդկային առաջին ընտանիքին ծագումէն մինչեւ այսօր, ապրած չէ երկրի վրայ առաքինի մարդ մը, որ սուտին միջամտութեան ապակինած չ'ըլլայ իր քողարկուած մեղքերը պաշտպանելու համար:

Ներկայիս, կը հարստանայ ինքզինքը եւ ուրիշները խաբելով, անհրաւ շահը իտէյլ ըրած:

Ամէն տեսակ նպատակ ու նուաճում կը կատարուի առեւտրական աշխարհին մէջ սուտին մեղսակցութեամբ:

Սուտով՝ կը հարստանայ ինքզինքը եւ ուրիշները խաբելով, անհրաւ շահը իտէյլ ըրած:

Ամէն տեսակ նպատակ ու նուաճում կը կատարուի առեւտրական աշխարհին մէջ սուտին մեղսակցութեամբ:

Սուտով՝ կը քողարկուին անհաւատարմութիւնները, սուտով՝ կը բազմապատկուին բարեկամութիւնները, սուտով՝ կը փաղաքշուին մեծահարուստները, սուտով՝ կը շահագործուին միամիտները, սուտով՝ կը խեղաթիւրին ճշմարտութիւնները, սուտով՝ կը կատարուին բանակցութիւնները, սուտով՝ կը կնքուին դաշինքները:

Հարցնենք: Ո՞վ սերմանեց մարդուն բնութեան մէջ սուտին որոնումները, ո՞վ ստեղծեց ամօթը եւ մեղքը մարդուն վարք ու բարքին մէջ, որ կամովին գործած սխալները պաշտպանէ ճշմարտութեան դէմ պայքարելով:

Հարցնենք կրկին: Ուրկէ՞ եւ ո՞ր անիծեալ ճանապարհով աշխարհ ժամանեց սուտը եւ համագորակեց մարդկային հասարակութեան սիրտը ու դարձաւ միահեծան մենատէրը կեանքին:

Գիտենք, որ աստանային այս կործանարար մոլորութիւնը, բնածին արատ մը չէ մարդուն էութեան մէջ, որ նախախնամութիւնը ստեղծած ըլլայ:

Սուտը՝ շահատակ մարդուն հոգեկան հիւանդութիւնն է եւ իր դիւային մտքին յղացումը:

Սուտին աշխարհակալութիւնը, ո՞չ սիրոյ յեղափոխութեամբ կը յաղթահարուի, ո՞չ մարդկային տկար ուժերով կը նուաճուի եւ ոչ հաւատքի զօրութեամբ կը բնաջնջուի:

Ինչպէս մարդուն մահով կը դադարին միաժամանակ՝ իր վիշտը եւ ուրախութիւնները, այնպէս ալ՝ հոգեկան ռազմադաշտին վրայ միաժամանակ կանգ կ'առնեն բարիին եւ չարին բախումները, երկուքին անփառունակ պարտութեամբ:

Առաջին ընտանիքը, Ադամ եւ Եւան, սիրային ու սեռային յարաբերութեան մեղանչումով՝ ստեղծին ու արտաքսուեցան դրախտէն, համանոյն ճակատագրով՝ երկրի երեսին պիտի ջնջուի մարդուն գոյութիւնը:

* * *

Ժամանակի ոգին, մտայնու-

թիւնը եւ ըմբռնումները բոլորովին տարբեր են ու հակասական եւ չեն ներդաշնակուիր իր հնաւանդ սովորութիւններու հետ:

Չես հաւատար, որ ընկերդ կը ժպտի ու կը խաբէ քեզ, կը շողոքորթէ ու կը ստէ, կը շահի ու կը շահագործէ, կը մեղանչէ ու կ'անիրաւէ: Ժամանակը այսօր՝ խստապահանջ է, կը ստիպէ քեզ, որ վերապահութեամբ եւ տարակուսանքով ընդունին իր խօսքը եւ խոստումը:

Փորձութիւնները շուքիդ հաւատարմութեամբ կը հետեւին քայլերուդ եւ ըստ մը ազատ չեն թողուր, որ չմեղանչես:

Լեզուին բոլոր բառերը կորսնցուցած են իրենց իմաստը եւ որակը ու կը փորձեն խաբել քեզ: Վստահիլ՝ կը նշանակէ խաբուիլ, հաւատալ՝ կը նշանակէ կալանուիլ, գործակցիլ՝ կը նշանակէ տուժել, բարեկամանալ՝ կը նշանակէ շահագործուիլ, գովել՝ կը նշանակէ փաղաքշել, երդուիլ՝ կը նշանակէ ստել:

Գնահատագիրները, գինեծօները, շնորհահանդէսները ապապրուած ու յանձնարարուած կատակերգութիւններ են, սոփեստներու սնապարծութիւնը սնուցող:

Հազուադէպ կը պատահի, որ արժանաւոր գրագէտի մը կամ գիտնականի մը վաստակը վարձատրուի յոբելիական ճառագայթութեամբ, համաժողովրդային սրտէն բխած:

Ծափերը որոտալի ուժգնութեամբ կը շնորհուին գովեստի մուրացկաններուն ներբողական ուղերձներով:

Ատենախօսները՝ ամպիոններու բարձունքէն եսական ելույթներով իրենց ինքնութիւնը կը փառաւորեն, քան թէ յոբելիարին վաստակը:

Հրապարակային հանդիսութիւններուն մէջ կ'երեւայ սուտին ՊԱՏՈՒԱԲԵՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ եւ կը շեշտուի ճՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ամփոսալի բացակայութիւնը:

Անհրաւութիւնը, որ ներկայիս մարդուն ամէն արտայայտութեան ու շարժման մէջ իր չարակամութիւնը կը ցուցադրէ, գրկած է արժանաւորը իր բեղուն վաստակին հատուցումէն եւ կը պատուէ կիսագրագէտին շնորհագրուի հրատարակութիւնները:

Ուրիշ մը, որ բարեպաշտութեամբ կը հաւատայ սուտին ընծայաբերումին բարիքներուն, անգոյ ուսումնարանի մը անկոչ տնօրէնն է, որ իր ապրուստը ապահովելու համար, փրոֆեսորի տիտղոսը կը վաճառէ անուս վաճառականներու, առանց անդրադառնալու իր արարքին տգեղութեան, որ բառին յոռեգոյն առումով՝ շահագործում է:

Դժբախտաբար, այս հրապարակային մեղանչումները կը կատարուին, հակազդեցութեան անկաշկանդ համարձակութեամբ:

Գրախօսականներ կը վաճառուին շուքի գովեստներու կողմէ, իրենց գրականագէտի բարոյակաւնը պղծելով:

Ժամանակն ալ մեղսակից է եւ թոյլ կուտայ, որ ի վնաս հայ գրականութեան ու մշակոյթին, այս աղաղակող մեղքերը անպատկառօրէն գործուին:

Շաբ.ը էջ 19

ԻՍ ՅՈՒՇԵՐԻՑ

ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Իրանի Արաք քաղաքի շրջանում գտնուող եւ երբեմնի հայաբնակ Քալաւա գիւղը պատկանում էր այն օրերին յայտնի Ռէզախան եւ Ղոլամալիխան եղբայրներին: Նրանց մեծ պապը Սէփահար էր կոչուում: Իւսէֆիանը գիւղի (վրացի) էր որ նախապէս քրիստոնէայ է եղել:

1852 թուականին պարսից Ֆաթհալի շահի պալատում վէզիրի (նախարար) պաշտօն է ունեցել, որի ջանքերով հիմք է դրուել զարգացել եւ ընդարձակուել է Սուլթանաբատ քաղաքը, որն այսօր Արաք է կոչուում: Իւսէֆիանը ծագումով հայ էր Յովսէփ անուամբ: «Բորջէ շիշէ» էին անուանում (Ապակեայ Բերդ): Բէզլար անունով 85 ամեայ մի ծերունի էր ապրում այնտեղ, որն զբաղուած էր հողագործութեամբ: Յովսէփի խանի հրահանգով Բէզլարից հարկ չէր ստացուում: Ռէզա խանը վախճանուեց 1970ին, իսկ Ղոլամ Ռէզա խանը 1996 թուին: Սրանք երբ այցելում էին մեր գիւղը՝ Քալաւա, ամէն բանից առաջ ուղարկում էին մեր հոգեւոր հովիւ Տ. Արսէն Քահանայ Դանիէլեանի տունը եւ հրաւիրում իրենց մօտ: Օրուայ որ ժամը որ լինէր, զգիրին ուղարկում էին եւ կանչում գիւղի տարեցներին, որոնց հենց իրենք էին ընդունում եւ նստեցնում: Նրանք յատուկ շարժանք էին տածում դէպի տարեցները եւ մանաւանդ քահանայ հօրը: Թերեւս զգուշ էին որ իրենց նախահայրերը քրիստոնէաներ են եղել:

Հայրս գիւղապետ Երեմ Նազարեանը երբ մեզ տանէր գիւղատէրերի մօտ, նրանք միշտ ասում էին գիւղապետի տղայ, մենք ձեզանից ենք: Նրանց միշտ անարատ գիրի էինք տալիս եւ փոխարժէքը չէինք վերցնում: Նրանք էլ փոխարէն առատ ցորենաքաղի ժամանակ, մեզ ցորեն էին տալիս: Մեր կողմից պատրաստուած գինու համբաւը տարածուել էր ամէնուրեք: Մեր գիւ-

ղատէրերը յայտնի էին իրեն հայասիրութեամբ:

Հայ գիւղացիների նկատմամբ յատուկ սէր ու յարգանք ունէին: Երբ այցելում էինք նրանց տները, ընտանիքի անդամները հիւրասիրում էին մեզ զանազան ուտելիքներով եւ պտուղներով: Գիւղատէրերը հայ գիւղացիներին ճանաչում էին անունով եւ ազգանունով: Քաղաքից գալիս էին բարձրաստիճան անձինք: Նրանց մեծ մայրը Շահադէ Խանումը, Ղաջար տոհմի թագաւոր Ֆաթհալի շահի թոռն էր: 1914 թուականին Ռուս-գերմանական պատերազմի տարիներին, Քաղաքի շրջանում եւս տազնապ է առաջանում եւ տասնեակից աւելի հայ ընտանիքներու ապաստանում են գիւղատիրոջ բնակարանը: Ապակեանքը բնական հունի մէջ անցնելուց յետոյ բոլորը վերադառնում են իրենց տները: 1944 թուից յետոյ մեր շրջաններում սկսուեցին բանուորագիւղացիական շարժումներ ու Քալաւա գիւղի հայ երիտասարդները ամբողջովին միացան այդ շարժումներին: Շատերը չգիտէին մինչեւ իսկ իրենց անելիքը եւ նպատակը:

Կառավարութեան ազդեցութիւնը թուլացել էր: Որոշ տարրեր օգտուելով պատեհ առիթից, սկսեցին անձնական հաշուեյարդար կատարել իրենց հակառակորդների հետ: Այդ անախորժ դէպքերը որոնք կատարուեցին մի շարք երիտասարդների կողմից եւ որոնք պատճառ դարձան կոիւնքերի եւ ծեծկռուքի, մասամբ ազդեցին հայութեան անուան եւ հեղինակութեան վրայ, որոնք ձեռք էր բերուած դարերի ընթացքում: Յաւալի է յիշատակել որ այդ տարրերից ոմանք հետապնդուեցին պետութեան կողմից եւ պատժուեցին: Սակայն մի բան պարզ էր, որ ամէն տեսակ սադրանք անցան ապարդիւն եւ պարսիկ ժողովուրդը ինչպէս նաեւ իշխանութիւնները խորը յարգանք էին տածում դէպի հայութիւնը եւ այդ վիճակը շարունակուում է մինչեւ այսօր...

ՀԱՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ի նպաստ

Նոր Հաճոյ Մեծն Մուրատ դպրոցին

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
 Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
 Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
 Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ի՞ն Verdugo Hills Country Club

400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

ՇԻՐԱՆԻ ԾԱՌ

ԱՐՈՊԷԼԵԱՆ

Լոյս տեսաւ Մոնթէվիտոյի մէջ «Ծիրանի Ծառ» գիրքը, որուն հեղինակն է Ուրուկուայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յակոբ Արքեպս. Գլընճեան, որ կը պարփակէ անոր պատմութեան քննարկը եւ գեղեցիկ ոտանաւորները՝ 307 էջ:

Աւելի քան քսան տարի է ի վեր կը ճանչնանք Սրբազան Հայրը: Մենք կարողացեր էինք իր աստուածաբանական եւ կրօնաշունչ գրութիւնները, ունկնդրեր էինք իր իմաստալից քարոզները, հայրենասիրական ելոյթները, խիստ շահեկան դասախօսութիւնները եւ բարձր ունեցած էինք քանի մը տարիներ աշխատել իր հետ եւ օգտուել իր մտաւորական պաշարէն: Այս անգամ Սրբազանը կը ներկայանայ մեզի իր գրական հատորով, որ կը կրէ մեր ազգային համեղ պտուղի անունը՝ Ծիրանի Ծառ եւ կը բանայ մեր ախորժակը հաճոյքով կարդալու գայն:

Գիրքին յառաջաբանին մէջ Փրոֆ. Անթառամ Ահարոնեան կը գրէ. «Գերաշնորհ Տէր Յակոբ Արքեպս. Գլընճեանի այս նոր գիրքը, ըստ մեր հայեցողութեան ընծայ մըն է կեանքի խորանին, իբրեւ արտայայտութիւն իր հոգեւոր խորքը կուտակուած հին ու նոր ապրումներու, իբրեւ ոգեկոչում հոգեպարար եւ սրտայոյզ յիշողութիւններու, նուիրական օրերու կարօտագին երազանքի...»:

Յակոբ Սրբազանին գրելու ոճը շատ պարզ է, դիւրամբունելի, դիւրահասկողի, որ յուզումով ու գոհունակութեամբ կը շոյէ ընթերցասէր հասարակութեան սրտերը: Եւ ճիշդ այդ պարզութեան մէջ պէտք է փնտռել իր տաղանդին ու գրելու արուեստին մեծութիւնը:

Գիրքը կը բաղկանայ կարճ պատմութեան քննարկ, անցեալի քաղցր յուշերէ, որոնք գեղեցկօրէն շաղկապուած են ներկայի հետ: Առաջին պատկերները իր մանկութեան յուշերն են, երբ հեղինակը իբրեւ մանուկ պատանի կ'ապրէր իր ծննդավայրին մէջ՝ Քեսապ, ուր ըստ իրեն «Ձմեռան գիշերներին մեղմօրէն տեղացող ձիւնը նստում էր մեր գիւղի տներին հողածածկ կտուրներին...»: Ձիւնը իջնում էր իբրեւ երկնառաք օրհնութիւն՝ անմեղութեան պայծառափայլ զգեստով ծածկելու համար ժամանակի եւ տարածութեան կեդոն ու կեղծիքը»:

Այնուհետեւ Սրբազանը կը պատմէ իր յուշերը ծնողաց եւ մեծ մօր մասին իր առաջին ուսուցչուհին համարելով իր մայրը, որ սորվեցուցած էր իրեն քաղել հայ դպրութեան եւ մարդկութեան անդաստանէն ներս:

Գիւղական պատկերներուն կը

յաջորդեն դրուագներ Ս. էջմիածնի վեհափառներուն՝ Գէորգ Զ.ի եւ Վազգէն Ա.ի կեանքերէն, որոնք վառ պահեցին Քրիստոնէական հաւատքի ջահը, պայծառ պահեցին Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցին, նոյնիսկ կրօնական հալածանքներու ամենէն սարսափելի օրերուն: Ըստ Սրբազանին՝ Գէորգ Զ. Կաթողիկոսը մեծութեան եւ արիութեան, իսկական վեհափառութեան խորհրդանիշ էր», իսկ Վազգէն Ա.ը «Հայրապետ բարի իմաստուն»:

Սրբազանը չի քաշուիր խարագանելու ազգային «Չոջերէն» այն պատեհապաշտ մարդիկը, որ ազգը կործանման կը տանին: Խոր ցաւով կը խօսի օտար ամերիկացի տարողութեամբ հայ նորահաս սերունդի ձուլման մասին: Այս առթիւ ինչքան յուզիչ է «Ովկիանոսից այն կողմ» պատմութեամբ, ուր տիրութեամբ կ'արձանագրէ հայրենի գիւղէն հեռացած մարդոց գաւակներու կորուստը, մինչդեռ իր մեծ հօր շառաւիղը գիւղին մէջ կը շարունակէ մնալ հայ «Պապա՝ Քէչէկ Յակոբ վաղուց հող է դարձել, բայց նրա փոխարէն հիմա իր թոռներն են երգում եւ նրա անաղարտ ձայնը իր թոռների միջոցով շարունակում է հնչել մեր գիւղում ու արձագանքը բռնում է սար ու ձոր: Նրա հայախօս ու հայրենասէր թոռները քանի կառչած են մնում գիւղի սրբազան հողին՝ չեն թողնի երբեք որ որեւէ ձեռք քանդի կամ վարունգի բոստանի վերածի նրա սուրբ շիրիմը...»:

Հեղինակը էջ սահմանափակուէր ներազգային թեմաներով, կը խօսի օրինակ, Նացի գերմանացիներու կողմէ խոշտանգուած ու նահատակուած կղերական Մաքսիմիլեանի մասին, կ'անդադարանայ Սան Սալվատորի հոգեւոր առաջնորդ՝ արքեպիսկոպոս Ռոմերոյի սպանութեանը եւ կը յանգի խորիմաստ եզրակացութիւններու:

Գիրքի 10րդ էջի վրայ կը տեսնենք պատմական նկար մը: Կարտինալ Ռաթցիլնգեր, այժմ Պապ Պենետիկոս Ժ. Ե. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս ու Յակոբ Սրբազանը, նկարուած 1981ին, Գերմանիա:

Գիրքի վերջաւորութեան կը հանդիպինք փունջ մը յուզախառն բանաստեղծութիւններու, որոնք արտայայտութիւնն են հեղինակի զգայուն հոգիին եւ ունեցած զօրաւոր հաւատքին:

Նշենք, վերջերս յատուկ հանդիսութեամբ տօնախմբուեցաւ Սրբազանին ձեռնադրութեան 30-ամեակը:

Արդարեւ, Յակոբ Սրբազանի Ծիրանի Ծառ գիրքով հայ գրականութեան պանծալի էջերուն վրայ կ'աւելնայ նոր էջ մը, նոր շունչով ու ոգիով օժտուած:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

ՅԱԿՈՒ ԱՐՔԵՊՍ. ԳԼՂՆՃԵԱՆ

Իմ ծնունդ օրուանից մօրս հետ իմ կողքին է եղել մեր տան հարեւանութեամբ, քարակոյտերի եւ վայրի թփերի մէջ հասակ նետած մի վիթխարի ծիրանի ծառ: Ոչ ոք չգիտէր, թէ ով էր տնկել այն: Գուցէ պապս կամ տա՛տս մի օր ծիրան են կերել եւ կորիզները պատահականօրէն դէս ու դէն գցել, որոնցից մէկնում էր վերապրելով՝ ծիլ է արձակել:

Ծառն իր տարիքը չէր կարողանում թաքցնել այսօրուայ մի շարք պառաւած կանանց նման, որոնց հաստակեղեւ շպարի տակ կեանքի մայրամուտն է սքողուած: Նրա բնի վրայ դրոշմուած էին սառնաշունչ քամիները, կտցահարող կարկուտները, տապի ու անողք քարկոծումների դէմ մղուած պայքարի բազմամեայ խորշոմները:

Բայց յաղթամարմին ծիրանի ծառը մնացել էր կանգուն. ճիւղերն ու ոստերը գորովագութ մօր քաղցրածոր թեւերի նման տարածած՝ պատրաստ գրկելու նոյնիսկ իր անառակ որդիներին:

Գարնան գալստեան առաջին աւետիսը այդ ծառի միջոցով էի ստանում: Ծիրանագոյն ոստերի վրայ բերաւոր սպիտակափառ ծաղիկներ էին բացուում՝ նման օդում կախարուած ձեան փաթիլների: Նրանց քաղցրամոյշ բուրմունքը պահում էր իր մշտաբոյր թարմութիւնը՝ գարնան յորդառատ անձրեւների համառուագի հետ խառնուած: Իսկ արեւոտ օրերին էլ ինչքան գունագեղ թռչուններ էին դայլայլելով ոստոստում այդ ծաղիկների մէջ, բազմերանգ ու նրբաթեւ թիթեռներ շուրջապար էին բռնում, լսուած էր ժրջան մեղունների բզբոցը, որոնք գալիս էին ըմբոշինելու ծաղիկների անմահական նեկտարը: Բացուած էր հեքիաթային մի աշխարհ՝ խորքով իրական ու շօշափելի, իմ մանկութեան առաջին յուշերով պարուրուած:

Պատահում էր նաեւ անխուսափելիին: Թխապոտ ամպեր էին կուտակուած, մռայլ երկինքը գայրացած փայլատակում էր: Ահասարսուռ որոտումների ձայներից լուռ մէջ էր թռչունների ուրախ ճուռուկները: Կարկուտը հարուածում էր ծառի ծաղիկներին, որոնց թերթիկները դողահար վար էին թափուած, իսկ երբեմն էլ նորաբողբոջ ոստերից շատերն ամբողջութեամբ ջարդուկտոր էին լինում: Քիչ ժամանակ անց ամէն ինչ խաղաղուած էր: Նորից բացուած էր երկինքը, բայց ծիրանի ծառի արցունքները դեռ շարունակում էին կաթել իր ճղակտոր դարձած գետնատարած բալիկների վրայ: Այդուհանդերձ նա կարիք չէր զգում մի թխարական խօսքի, այլ իր սիրալիր հայեացքը ուղղում էր ինձ՝ կարծես ասելու համար.

- Մի տխրիր, տես, վիրաւոր ճիւղերիս մէջ պահել եմ քո բաժինը:

Նոր օրեր էին բացուում՝ արեւոտ, շոգ, չոր ու շատ անգամ հեղձուցիչ: Ծիրաններին սփռում էր հովասուն ստուերը իր բնի շուրջը անհոգ խաղացող մանուկների վրայ: Մենք անխղճօրէն քաշքշում էինք ճիւղերը՝ քաղելու համար նրա լուսաժպիտ ու քաղցրահամ պտուղները, իսկ ուր չէր հասնում մեր ձեռքը՝ քարով անզթաբար խփում էինք ճիւղերին, որոնց ցնցումից հասարակուած՝ դրանք ընկնում էին ցած քարերի ու մացառների մէջ, թէեւ վիրաւորուած տեսքով, բայց ոչ դառնացած համով: Իսկ ծառը՝

նա անլիշաչար մօր նման չէր վշտանում մեզանից, շարունակում էր տարածել իր գոլրգոլրոտ բազուկները մեր՝ չարածճի երեխաներիս վրայ եւ նոյնիսկ աւելին, տերեւների մէջ թաքցրած իր հասունացած պտուղները, հետզհետէ ինքնաբերական կերպով եւ մեծահոգաբար, ցած էր գցում մեզ համար:

Գալիս էր աշունը: Ծիրաններու տերեւները հողմացրիւ էին լինում, ամէնից յանդուգներն անգամ, միառժամանակ դիմադրելուց յետոյ, մեծագոյն տխրութեամբ ընկնում էին ցած: Դեղնագոյն մի մեղմադձոտութիւն սփռում էր իր աննիւթական շղարշը բնութեան եւ մեր հոգիների վրայ: Այնուհետեւ ձմրան ցրտաշունչ ու անողք եղանակը հալածում էր մեզ բացօթեայ վայրերից: Պատասպարուած էինք ծնողական սիրով ու վառարանի կրակով ջերմացած մեր տներում: Պատահանից նայում էի ծառերին, յատկապէս իմ սիրելի ծիրանի ծառին: Նա իր վիթխարի ու խրոխտ կեցուածքով առանձնանում էր միւսներից: Լուռ էր, գրկուած իր արտաքին շքեղ փայլից, բայց միշտ վեհապանծ, ինքնագոհ ու հպարտ՝ ուրիշներին օգտակար լինելու հաճոյքից վեհացած ու ազնուացած: Ծառը նոյնիսկ չէր ափսոսում իր կորցրած տերեւների համար, քանզի գիտէր, թէ դրանք հողին խառնուելով՝ դառնալու են անփոխարինելի սնունդ ուրիշ արմատների համար:

Պայմաններն ու հանգամանքները ստիպեցին ինձ, եւ ինձ նման շատերին, թողնելու մեր պապենական հողը, տունն ու տեղը եւ հաստատուելու օտար աշխարհում: Անցան տասնեակ տարիներ, բայց ես ամէն գիշեր, նաեւ միայնութեան պահերիս, փակում էի աչքերս ու մտքով գնում տուն: Կրկնում էր միեւնոյն տեսարանը. սա մեր գիւղն է, դէպի արեւելք նայելիս՝ ձախ կողմում մեր տունն է, որի մշտաթոն պահապանն է կարօտակէզ սրտով իր որդուն սպասող մայրս, որ տնից եթէ դուրս էր գալիս՝ միայն եկեղեցի գնալու համար: Տան աջ կողմում իմ ծիրանի ծառն է, որ լայնատարած բազուկները փռած, սպասում է վերադարձիս:

Տարիներ անց վերադարձայ տուն: Գիտէի, որ շատ բան էր փոխուել իմ հայրենի գիւղում, բայց այդուհանդերձ, թէկուզ մի պահ խաբուած լինելու ցանկութեամբ, դարձայ դէպի արեւելք: Նոյն արեւն էր, իմ մանկութեան ոսկեթեւ երազանքների շէնչող արեւը: Նայեցի ձախ կողմ, մեր տունը հաւասարուած էր գետին, ուր չկար ինձ սպասող հրեշտականման մայրս, գիտէի որ այդ այդպէս էր, բայց ցանկացայ մէկ անգամ էլ ապրել անցեալս: Ծրջուեցի դէպի աջ՝ իմ ծիրանի ծառի տեղում մի շէնք էր բարձրացուել...:

Սակայն ոչինչ, ոչինչ չի կարող ջնջել մանկութեանս լուսաշող այդ գոյգ յիշատակները, որոնք անաղարտ կերպով դրոշմուած կը մնան հուշեանս մէջ: Ինձ համար դրանք մշտագոյն ներկայութիւն են. դէպի արեւելք նայելիս՝ ձախ կողմում մեր տունն է՝ մօրս քաղցր տեսքով ու ժպիտով, իսկ աջում՝ ծիրանի ծառը՝ իր ծիրանաշող տեսքով: Նրանք՝ մայրս եւ ծիրանի ծառը, ուրիշներին նուիրելով ու ծառայելով, ուրիշներին երջանկացնելով՝ ոչ թէ սպառուեցին՝ այլ՝ անմահացան:

HARUT DER-TAVITIAN
License #0B28270
1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201
Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excellhye.com
www.excellhye.com
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՏԵՍԱԿԵՏ

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Կուսակցութիւն ըսելով կը հասկնանք ազգային, ընկերային ու քաղաքական հարցերու շուրջ նոյն կեցուածքը ունեցող անհատներու համախմբումը: Այս կուսակցութեան համար է որ կազմակերպութեան սփիւռքահայ երեք կուսակցութիւնները՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը՝ 1887ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ 1890ին, եւ 1921ին Ռամկավար Ազատական կուսակցութիւնը, որուն արմատները կը հասնին մինչեւ 1885, երբ Վանի մէջ հիմնուեցաւ Արմենական Շարժումը եւ որ 1915ին հանդիսացաւ Վանի ինքնապաշտպանութեան գլխաւոր ուժը՝ միասնաբար միւս երկու կուսակցութիւններուն եւ ամբողջ Վանի հայութեան գէնք բռնող բազմակններուն:

Այս ակնարկի ծիրէն դուրս կը մնայ Հայաստանը, ուր բազմատեսակ ու խայտաբղէտ կուսակցութիւններ գիրար կը կրկնեն, իրար կը հալածեն, ժողովուրդէն ու հայրենիքէն աւելի միայն գիրենք կազմակերպողներուն ծառայելու համար:

Արդար ըլլալու համար պէտք է յիշել նաեւ սփիւռքահայ համայնավար կուսակցութիւնը, որ ոչ եւս է ներկայիս, բայց որ մեծ բազմութիւններ շարժող կազմակերպութիւն էր համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին եւ յաջորդող տասնամեակներուն: Այսօր, Հայաստանէն դուրս գոյութիւն չունի ան, սակայն կան բազմաթիւ անհատներ ու խմբակներ, որոնք կը պահեն այդ գաղափարաբանութեան հանդէպ իրենց հաւատամքը՝ նոյնիսկ անոր միջնաբերդը եղած Խորհրդային Միութեան փլուզումէն ետք:

Սփիւռքահայ կուսակցութիւնները հասարակ յայտարարի մը տակ բերող նպատակը ազգին ու հայրենիքին ծառայութիւնն է: Այդ նպատակին շուրջ տարակարծութիւն չունին անոնք, սակայն նոյն նպատակին հետապնդման համար իսկ չեն միանար, բացի երբեմն, Մեծ Եղեռնի առթիւ կազմակերպուած ձեռնարկներէ, կամ պարագայական ցոյցերէ:

Իսկ անկուսակցականներու բազմութիւնը, կամ «չէզոքներու կուսակցութիւնը», ինչպէս կը սիրեն ըսել ոմանք, համազգային մղումէ զուրկ՝ անդիմազիծ գանգուած մըն է, որ ընդհանրապէս չի գործեր, բացի այն պարագաներէն, երբ նոյն այդ կուսակցութիւնները կ'ըլլան մղիչ ուժը: Այս առթիւ տեղին է յիշել մեր ժամանակներու մեծագոյն գրողներէն Շահան Շահնուրի պարագան, որ անկուսակցական էր եւ իր կեանքին վերջին տարիներուն տառապեցաւ հիւանդանոցէ հիւանդանոց նետուելով, օգնութիւն աղերսելով, եւ որուն պաղատանքը գործնականօրէն չլսեց անկուսակցական գանգուածը, մինչեւ որ մահը զգեստեց զինք կանխահաս կերպով: Բայց կուսակցական կեանքն ալ այս պատկերին հակադրուելու չափ նախանձելի չէ:

Մեր կուսակցութիւններուն երկուքը՝ Ս.Դ.Հ.Կ. եւ Հ.Յ.Դ.՝ սոցիալիստական (ընկերավարական) են: Իրենց դաւանած սոցիալիզմը եւ ազգին ու հայրենիքին ծառայելու յանձնառութիւնը գիրենք չէ կրցած միացնել եւ ոչ իսկ բարեկամացնել: Իսկ երրորդը Ռ.Ա.Կ.ն է, որ ինչպէս անուրը կը յուշէ, ռամկավարական (դեմոկրատական) ուղիի կը հետեւի:

Սակայն միաձուլ չկրցան մնալ կուսակցութիւնները, մասամբ իրենց սխալներուն հետեւանքով եւ մաս-

սամբ արտաքին միջամտութիւններու պատճառով, բայց մանաւանդ անհատներու եւ խմբակներու միջամտողական ձգտումներուն, սեփական շահի ու փառքի հետապնդումներուն հետեւանքով: Արդարեւ, նոյն կուսակցութեան մէջ գոնուեցան անհատներ ու խմբակներ, որոնք չբաժնեցին ղեկավարութեան քաղաքականութիւնը, աթոռի ու շահի մրցակցութիւնը, բռնատիրական գործելակերպը, կամ պարզապէս ընթացք տալով իրենց անիշխանական խառնուածքին՝ ըմբոստացան ու ճեղքեր յառաջ բերին: Այս ցաւալի երեւոյթին գերծ չկրցան մնալ մեր կուսակցութիւնները, առաւել կամ նուազ չափով պառակտումի եւ հակամարտութեանց ենթարկուելով: Վերոյիշեալ պատճառներով յառաջ եկած անբաղձալի կացութեան մէջ է որ տեղի կ'ունենան դէպքեր ու կը կատարուին արարքներ, որոնք ոչ միայն անպատուաբեր են հեղինակներուն, այլ կ'ոտնակոխեն նաեւ կուսակցական կարգուկանոնը:

Ինչպէս ըսինք, բոլորին ալ նպատակը ազգին ու հայրենիքին ծառայելն է, բայց զարմանալիօրէն, այդ նպատակին համար իսկ չեն կրնար միասնական աշխատանք տանիլ: Եւ աւելի տխուր պատկեր պարզելով՝ յաճախ իրարու կը հակադրուին, գիրար խճճեմով: Այս մարզին մէջ շատ տխուր եւ ապշեցուցիչ օրինակ մը տուաւ Հ.Յ.Դ. գերագոյն ղեկավարներէն հայաստանաբնակ Վահան Յովհաննէսեան, որ չէս գիտեր ինչու անհրաժեշտ զգացեր էր վերջերս յայտարարելու որ Սփիւռքի մէջ կայ ու չկայ Դաշնակցութիւնը կայ, ոչ Հնչակեան եւ ոչ Ռամկավար, ճիշդ այդպէս: Կարելի է զարմանալ ու ցաւիլ միայն հատուկ ղեկավարի մը նման արտայայտութեան համար: Ինչո՞ւ այս ամբարտաւանութիւնը՝ որ արժանապատուութեան ծանր վիրաւորանք կը պատճառէ միւս երկու կուսակցութիւններու հազարաւոր անդամներուն եւ համակիր գանգուածներուն: Արդեօ՞ք անոր համար որ Հայաստանի վերջին ընտրութիւններուն Հ.Յ.Դ. երրորդ տեղը զրաւած էր: Այս առթիւ յիշեցնենք Պրն. Յովհաննէսեանին որ ոչ հեռու անցեալէն, տակաւին անկախութեան սկիզբը, նորակազմ Խորհրդարանին մէջ, յանկարծ, 16-17 ռամկավար պատգամաւորներ (երեւոյթաբար) երեւան եկան: Ասիկա արդիւնքն էր Խորհրդային Հայաստանի հետ տասնամեակներով կատարուած գրական, մշակութային եւ ընկերային յարաբերութիւններուն, բայց որ անցողակի երեւոյթ մը եղաւ Հայաստանի մէջ Ռ.Ա.Կ.ի ղեկավար նշանակուած ձախաւեր եւ անժողովրդական պատասխանատուներուն պատճառով:

Նախանձը, մեծամտութիւնն ու արհամարհանքը պախարակելի երեւոյթներ են, որոնցմէ հեռու պէտք է մնան ամէն ազնիւ մարդ, եւ մանաւանդ, ազգային կեանքի վրայ ազդեցութիւն ունեցողները: Պրն. Վահան Յովհաննէսեան այս վերջին դասակարգին պատկանող մարդոցմէն է, որուն դիրքին ու վարկին չի վայելեր իր կատարած յայտարարութիւնը: Արհամարհանքը զինք կամ իր կուսակցութիւնը չի գորացներ, ընդհակառակը կը վարկաբեկէ: Իսկական զօրաւորը չի վախնար գործակցութեան, այլ վեր կը բռնէ ու կը գնահատէ մրցակիցները, խիզախօրէն նոյնիսկ ձեռք երկարելով գործակցութեան, փոխանակ արհամարհանք ցուցաբերելու:

ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ 99,5 ՏՈԿՈՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 5-էն

ներ, մնացած մօտ 550 հազարը տուրիստներ եւ մի քանի օրով ՀՀ-ից բացակայող քաղաքացիներ են: Միւս կողմից, արտագնայ աշխատանքի մեկնում են տարուայ առաջին ամիսներին, վերադառնում տարեվերջին: Եգանեանի հրապարակած վերը բերուած ցուցանիշի հիման վրայ կարող ենք ասել, որ այս տարուայ առաջին 4 ամիսներին Հայաստանից մեկնած 323 հազ. անձանցից առնուազն 200 հազարը արտագնայ աշխատանքի մեկնող անձինք են, ովքեր կը վերադառնան տարեվերջին: Իսկ ՀՀ ժամանած եւ տուն վերադարձող օտարերկրացիների, ինչպէս նաեւ մի քանի օրով արտերկիր մեկնող ՀՀ քաղաքացիների ցուցանիշը տարուայ այդ ժամանակաշրջանում կազմում է մօտ 82 հազար մարդ (323 հազարից հանած 200 հազար, մնացած թուից նաեւ հանած վերը նշուած 41 հազարը, որպէսզի այդ թիւը կրկնակի հաշուած չլինենք): Հայաստան օտարերկրացիների մուտքուելքի, ինչպէս նաեւ կարծաժամկէտ արտերկիր գնացող եկող ՀՀ քաղաքացիների ցուցանիշի ամենամեծ մասը բաժինը է ընկնում Մայիսից-Սեպտեմբեր ժամանակահատուածին, այսինքն՝ տարուայ երկրորդ քառամսեակին:

Ուստի, ստացուած է, որ Մայիսի 12-ին Հայաստանում գտնուող

ընտրողների մօտաւոր թիւը ստանալու համար վերը նշուած 1 միլիոն 598 հազարից պէտք է հանենք 200 հազար արտագնայ աշխատանքի մեկնածներին: Արդիւնքում, ստացուած է, որ Հայաստանում առկայ ընտրողների թիւը կազմում է մօտ 1 միլիոն 398 հազար: Իսկ ինչպէս արդեն նշել ենք, Մայիսի 12-ի քուէարկութեան պաշտօնական արդիւնքների համաձայն, ընտրութիւններին մասնակցել են 1 միլիոն 391 հազարից աւել ընտրողներ: Ստացուած է՝ Հայաստանում գտնուող ընտրողների շուրջ 99,5 տոկոսը մասնակցել է քուէարկութեանը: Նման ցուցանիշ նոյնիսկ Սադամ Հուսէյնի կառավարած Իրաքի ընտրութիւններում չի արձանագրուել:

Վերջում բոլոր նրանց համար, ովքեր կարող են իրական համարել, որ 2007-ի Մայիսի 12-ի ԱԺ ընտրութիւններին մասնակցել է 1 միլիոն 391 հազար մարդ, տեղեկացնենք, որ 1999-ի Մայիսի 30-ի ԱԺ ընտրութիւններին, որտեղ յաղթեց երջանակաշրջատակ կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի գլխավորած «Միասնութիւն» դաշինքը, քուէարկութեանը մասնակցել էր 1 միլիոն 138 հազար ընտրող: Մնում է համեմատել, թէ 1999-ի ընտրութիւնների ժամանակ էր ընտրողների ակտիւութիւնն աւելի բարձր, թէ 2007-ին:

ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՒՆ

Շարունակուած էջ 5-էն

ծակալութեան յուշարձանների ու պատմական միջավայրի պահպանութեան եւ օգտագործման բաժնի պետը համաձայնեց, որ «Վերլիշինի եկեղեցու տարածքն անբարեկարգ է», բայց վերականգնման աշխատանքներ այստեղ չեն արուել:

Պրն. Շաքարեանը նշեց, որ մինչեւ 60-ական թուականները սահմանափակ թուով յուշարձաններ էին վերականգնուում: Սովորաբար, վերականգնում էին առաւել արժէքաւոր եւ նշանաւոր, միաժամանակ առաւել վտանգուած եկեղեցիները՝ հիմնականում խոշոր վանական համալիրներն էին ընդգրկուած վերականգնման ծրագրում: Վերականգնումների թիւը սկսեց աճել 80-ականներից: Վարչութեան ֆինանսաւորումը 90-ականներին աւելացաւ, որը հնարաւորութիւն տուեց անցնել հնագոյն արժէքաւոր յուշարձաններին, որոնք կարող էին հանդիսանալ հայ ճարտարապետական կառուցողական արուեստի նմուշներ: Այդպէս շատ կառուցներ ընդգրկուեցին վերականգնման ցուցակում՝ սկզբում 6-7-րդ դարերի յուշարձանները, այնուհետեւ՝ 7-8-րդ դարերի կառուցները:

Յուշարձանների մի մասը, որոնք թերեւս կարող են օգտագործման ենթակալ լինել, որոշուել է յանձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Յուշարձանները, որոնք ենթակալ չեն սեփականաշնորհման եւ պարտաւոր են օգտագործուել իրենց գործառնական նշանակութեամբ, այսինքն՝ պաշտամունքային կառուցներ են եւ 70%-ով պահպանուել են, կը վերականգնուեն եւ կը յանձնուեն համայնքների օգտագործմանը: Նրանք, որոնք հնարաւոր չէ վերականգնել, պէտք է ընդգրկել զբօսաշրջութեան վայրերի ցանկում,

ինչպէս նաեւ օգտագործել գիտագործառնական նշանակութեամբ: (ՀՀ տարածքում գտնուում են 24200-ից աւելի յուշարձաններ, որոնք իրենց տեսակով եւ նշանակութեամբ դասակարգուած են 2 տիպի՝ հանրապետական եւ տեղական նշանակութեան յուշարձաններ):

90-ականներից մինչ այսօր կառավարութեան որոշմամբ Մայր Աթոռին է յանձնուել 206 եկեղեցի, եւ այդ ուղղութեամբ աշխատանքները շարունակուած են: Բաժնի պետը յայտնեց, որ գործակալութեան տարածքային բաժիններին յանձնարարուել է թեմական առաջնորդների հետ ուսումնասիրել եւ կազմել ցուցակները, որպէսզի իրականացնեն դրանց յանձնման աշխատանքները: Գործում Սիւնիքի թեմական առաջնորդի տեղակալ հայր Աբգարը տեղեկացրեց, որ Առաջնորդարանի պահանջով իրենք կազմել են Սիւնեաց թեմում գտնուող եկեղեցիների ու մատուռների անուանացանկը՝ շուրջ 70 անուն: Վերջերս Մայր Աթոռը դիմել է ՀՀ կառավարութիւն՝ 72 եկեղեցիներ Յուշարձանների պահպանութեան վարչութիւնից Մայր Աթոռի տիրապետութեանը յանձնելու խնդրանքով: Մայր Աթոռի տեղեկատուական բաժնի տնօրէն Վահրամ քահանայ Մելիքեանն այս գործընթացը բնութագրեց այսպէս. «Եկեղեցուց վերցուած կալուածքները վերադարձուած են՝ համայնքներում դրանք պաշտամունքային նշանակութեամբ գործածելու համար»: Կը յաջողուի՞ հոգեւոր իշխանութեանը իրականացնել իրեն յանձնուած եկեղեցիների պահպանութիւնը, գործակալութիւնում տեղակալ էին, որ Մայր Աթոռին վերադարձուած եկեղեցիներն օժուում են, իսկ յետոյ երբեմն չեն կարողանում սպասարկող քահանայ գտնել:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՇԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 13-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

- Արարատ - Փիւնիկ 4-3
- Բանանց - Գանձասար 2-3
- Շիրակ - Ուլիս 3-1
- Միկա - Արարատ 2-2
- Փիւնիկ - Կիլիկիա 2-0



	Խումբերու դասաւորումը					
	Խաղ	Յաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միակոր
1. Փիւնիկ	13	10	1	2	30-10	31
2. Արարատ	12	8	2	2	22-7	26
3. Բանանց	12	6	3	3	19-14	21
4. Միկա	13	6	3	4	23-15	21
5. Շիրակ	13	5	3	5	13-12	18
6. Գանձասար	13	4	4	5	10-9	16
7. Ուլիս	13	1	2	10	6-29	5
8. Կիլիկիա	13	1	2	10	4-31	5

ՎԻԳ ԴԱՐՉԻՆԵԱՆ ԱՇԽԱՐԻ ԱՆՈՅԵԱՆԻ ԿՈՉՈՒՄԸ ԶԻՋԵՑ ՖԻԼՊԻՆՑԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿԻՆ

Վիկ Դարչինեանը շաբաթ օրը առաջին պարտութիւնը կրեց պրոֆեսիոնալ բոնցքամարտիկի իր կարիերայի ընթացքում՝ թեթեւ քաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը գիշերով ֆիլիպինցի Նոնիտո Դոնեյրին:

Ամերիկեան Բրոնքսի Բրիջվորթ քաղաքում անցկացուած մրցամարտում Աւստրալիան ներկայացնող 31-ամեայ հայ բոնցքամարտիկը ի սկզբանէ գիշերում էր մրցակցին, եւ ի վերջոյ, հինգերորդ ռաունդում ձախից հարուածով նոկաուտի ենթարկուեց՝ մի քանի րոպէ պառկած մնալով ռինգում:

Վիկ Դարչինեանը աշխարհի ախոյեանի իր տիտղոսը պաշտպանում էր եօթերորդ անգամ: Պրոֆեսիոնալ բոնցքամարտի ռինգում նա յաղթանակ էր տօնել իր նախկին բոլոր 28 հանդիպումներում:

BBC-ի վկայութեամբ, մրցամարտից յետոյ հայ բոնցքամարտիկը ֆիլիպինցու նկատմամբ ռեւանշի հասնելու ցանկութիւն է յայտնել:

Նոնիտո Դոնեյրի աւագ եղբորը՝ Գլենին, Վիկ Դարչինեանը պարտութեան էր մատնել անցած տարի:

«Այս մրցամարտը միայն ինձ համար չէր, այն նաեւ իմ ընտանիքի եւ ֆիլիպինցի ժողովրդի համար էր: Այսօր ես կարողանում էի զգալ նրանց էներգիան: Ես այնքան լաւ էի ինձ զգում ռինգում», - յայտարարել է Նոնիտո Դոնեյրը:

ՍԵՎԾՈՎԵԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐՈՒՄ ԸՅԱՍՏԱՆՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԹԻՄԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԳՐԱԻՅՑԻՆ ԳՐԴ ՏԵՂԸ

Յուլիսի 9-ին Թուրքիայի Տրապիզոն քաղաքից հայրենիք վերադարձաւ Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան անդամ երկրների առաջին մարզական խաղերի մասնակից Հայաստանի պատուիրակութիւնը: Ինչպէս «ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցին յայտնեց պատուիրակութեան ղեկավար Եղիշ Դաւթեանը, խաղերին մասնակցել են 11 երկրների մօտ 2500 մարզիկներ, այդ թւում 38-ը՝ Հայաստանից: Վերջիններս հանդէս են եկել խաղերի ծրագրում ընդգրկուած 11 մարզաձեւերից 5-ում: Մեղալների հաշուարկով Հայաստանի հաւաքականը թիմային պայքարում գրաւել է 9-րդ տեղը. բացառութեամբ ֆուտբոլիստների, միւսներն արժանացան մեդալների: Իսկ առաջին եռեակում տեղ են գտել Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ուկրաինայի պատուիրակները:

Յաջորդ խաղերը տեղի կ'ունենան 2010թ.-ին Ռուսիայի Կոնստանցա քաղաքում:

Հ.Մ.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ուրախութեամբ կու գանք ձեզի տեղեկացնելու թէ ամէն Շաբաթ առաւօտեան ժամը 10:30էն մինչեւ 1:00 տեղի պիտի ունենայ սկաուտական դասըթացքներ: Անոնք որ կը փափաքին մաս կազմել սկաուտական կամ պասքեպոլի խումբերուն կրնան դիմել Գարրիէլ Միսիթարեանին՝ (626) 376-2658 եւ կամ Հ.Մ.Մ.ի Կեդրոնը՝ (626) 398-0506, 1060 N. Allen Ave. Pasadena

Մանրամասնութիւններուն համար կրնաք հետեւիլ »Մասիս« շաբաթաթերթին:

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

- Օգոստոս 5 «Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ
- Սեպտեմբեր 1,2,3 Հ.Մ.Մ. Փաստիմա եռօրեայ բանակում
- Սեպտեմբեր 23 Հայաստանի Անկախութեան Օրուայ Փառատօն
- Նոյեմբեր 4 ՄԴԿ-ի 120 Ամեակի Հանդիսութիւն

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country:-----
 Tel:----- Fax:-----

You can change your behavior and we will help you to do that

AA HYPNOSIS CENTER

Artin Sagherian
 Hypnotherapy
 Tel: 818-434-8118

Call for an appointment or consultation

ՀԻՊՆՈՍԱՐՈՒԺՈՒԹԵԱՆ ԿԵՂՐՈՆ
 Փորձառու Բժիշկ
ԱՐԹԻՆ ՍԱԴՐԵԱՆ
 Վկայեալ Հիպնոսաբոյժ

- * Պատանդներու վերաբերող վարուելակերպային փոփոխութիւն
- * ADD-ADHD
- * Անկողնային գիշերային թրջում (միզային)
- * Եղունգների կրծում

Հասցէ. 1160 North Central Ave., # 210, Glendale
Հեռ. 818-434-8118
 Միայն ժամադրութեամբ

New Offices For Lease
IN PASADENA
 On Allen Ave. • South of Washington Blvd.

Available spaces are between 250sq.ft. TO 460sq.ft.
ALL UTILITIES ARE INCLUDED

For More Details
 Call Vartan
(626) 255-2537

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈԱՉԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

«ՅԵՄՇԻՆ»

Շաբաթուան կուսակցութիւն 7-էն

ա. Արդիւնները (Արտալազիւր)
բ. Թուրքիական ցիւցիլները (Դրսեցիլները)

Այս երկու ենթաբաժնիներու միջեւ հիմնական տարբերութիւնը «Արդիւններու պարագային» կը փոխուի «յ»-ի: Օրինակ քար = քայ, լեռ = լեյ, հարսնիք = հայսնիք, հալիւոր = հալիւոյ (ալիւոր ըսել է):

ՀԱՄԱՅՆՅԻՆԵՐՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Ժողովրդական երգ ու պարերը գիւղէ գիւղ կը տարբերէին: Նոյնիսկ տարբեր երաժշտական գործիքներ կը գործածէին:

Արեւմտեան համալսարանները աւելի շատ կը գործածէին թուրք-միջին կոչումով երաժշտական գործիք մը որ կը շինուէր ուլի կաշիով:

Արեւելեան համալսարանները կը գործածէին տեսակ մը սրինգ որ կը շինէին սոսախէն ծառով:

Համալսարանները եւ բոլոր Սեւ Ծովու շրջանի ժողովուրդները ներառեալ լազերը հայերէն «պար» բառին տեղը կը գործածէին յունարէնէ առնուած «հորոն» բառը:

Համալսարանայական ժողովրդական երգերէն օրինակ մը:

ԶՈՊԻՆ ԵՐԳԸ (ՀՈՎԻՒՆ ԵՐԳԸ)

Չոպոն իմ չոպոն, ես սարի չոպոն (հովիւ իմ հովիւ ես սարի հովիւ)
Չալելն կէշտոմ օջիւղոյնիս կու-

կոն (նուագելով կ'երթամ, ոչխարներս կու գան)

Չոմպախ - կոտեշուէր, փռուած սար ու ծիր (եղջիւրաւոր մահակներ փռուած սար ու ծիր)

Չայիր չիման ը կու տայ կաթ ու սեր (Անոնք կու տան կաթ ու սեր)

Երկն պայիրին սարին ա սարին (երկար սարալանջը գով է գով)

Ոչխլոյնի կայոյիս, կայոյնի չայիրին (ոչխարները մեղեդիիս տակ կ'արածեն մարգագետինը)

Չոպոն իմ սարին ես քողկը տարին (հովիւ իմ սարին ես ողջ տարին)
Եոմճիմ տուն տեղս, եսստուղս քարին (Եսփոյնիմ տուն տեղս է, քարը բարձս):

ՀԱՄԱՅՆՅԻՆԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՏԿԱՐԱՑՈՒՄԸ

Երբ ազգի մը լեզուն կ'արգիլուի եւ գանազան ազդակներով պարտադրականօրէն կրօնափոխութեան կ'ենթարկուի, անշուշտ թէ 300 տարուան մէջ ինքնագիտակցութեան գաղափարն ալ ինքնաբերաբար փոփոխութիւններու կ'ենթարկուի:

Դժբախտաբար կրօնափոխները նոյնիսկ կը տանջուին «մերժելու» եւ «ուրանալու» հոգեբանութեան լծին տակ: Այսօր նոյնիսկ համալսարանները կասկածի մէջ շուարած են:

Ընդունիլ անցեալի տառապանքները վերատին ապրել, թէ չընդունիլ՝ հոգեկան տառապանքներով չարչարուիլ:

ՍՈՒՏԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Շաբաթուան կուսակցութիւն 15-էն

* * *

Վերոգրեալ մեղադրանքները թող ծանր չթուին բարեմիտ ընթացողներու, երբ ճշմարտութեան բերանն է, որ կը բարբառի, յանուն ազգային արժանապատուութեան:

Բժշկական առումով մտային հիւանդներ են հրապարակը ժխտող այս մտորածները:

Կարծես՝ աշխարհ եկած են, ոչ թէ որպէս հայ ապրելու եւ հայութեան ու հայրենիքին ծառայելու, այլ իրենց անգոյն արժանիքներով պարծենալու:

Մարդ՝ ինչ դիրք ալ ունենայ հասարակութեան մէջ, իր քսակը պարարտացնելէ առաջ, պէտք է հարստացնէ իր հոգին աստուածային շնորհներով:

Միայն դաստիարակուած սրտով ու մտքով կրնանք արդիւնաւորել եւ սրբացնել, բարոյական եւ նիւթական փոխառութիւնները, գորս Երկինքը կը պարգեւէ մեզի:

Կեանքը այլազանութիւն մըն է իր դրական ու բացասական արտայայտութիւններով: Ամէն անհատ համաձայն իր կարողութիւններուն եւ ժամանակի պահանջներուն կոչուած է բարերար ու փրկարար դեր կատարել այն հասարակութեան մէջ, ուր կ'ապրի ու կը գործէ:

Մէկը՝ որպէս գործատէր եւ միւսը որպէս գործաւոր, մէկը բժիշկ եւ միւսը փաստաբան, մէկը հոգեւորական եւ միւսը վաճառական, մէկը խմբագիր եւ միւսը ուսուցիչ, մէկը պաշտօնեայ եւ միւսը ծառայ: Մարդոց բոլոր գործերը, երկրային ու երկնային պարտականութիւններ են Տիեզերակալէն յանձնարարուած:

Արդար չէ, ազգային բարերար տիտղոսով պատուել անհատ մը, որ իր ողջութեան փնի մը չէ տուած իր տարաբախտ ժողովուրդին եւ յետ մահու կը կտակէ իր հարստութիւնը, գանազան նպատակներու, որ այլեւս՝ տէրը չէ իր դրամին:

Նոյնպէս, բարերար կը հռչակուին այն բոլոր նուիրատուները, որոնք պետութեան պատկանող տուրքէ զերծ գումարները կը նուիրեն ազգային նպատակներու: Ճշմարտութիւնը այն է, որ իրենց դրամագլուխին կուսութիւնը կը մնայ անարատ եւ անկորուստ:

Ես կը հաւատամ, որ մարդու մը ինչքը եւ ստացուածքը, եղեր է արծաթ կամ ոսկի, մահէն ետք, կը դադարի իր սեփականատէրը ըլլալէ:

Կտակակատար մը, յաւերժօրէն համազգային երախտագիտութեան արժանի կը համարուի, երբ իր կենդանութեան գլխաւորըն իր պարտքը ժողովուրդին հանդէպ կատարելէ ետք, մահէն յետոյ եւս, կը շարունակէ բարերարել, անկասելի ընթացքով:

Երբ այս տողերը կը գրեմ, չեմ կրնար չյիշել, բազմերախտ բարեգործներու առաջին շարքին, Բարեգործականի յաւերժալոյս նախագահ՝ Ալէք Մանուկեանը, որուն անունը արդէն՝ հոմանիշ դարձած է Պօղոս Նուպարի լուսապայծառ անունին:

Ճշմարիտ փառքը կը կերտուի, ոչ թէ դրամին բրգացումով, այլ՝ որբին արցունքը սրբելով, անօթին կերակրելով, մերկը հագուեցնելով, եկեղեցիները եւ հայ դպրոցները պայծառացնելով:

Ամէն ուրիշ փառք, սնապարծութիւն է: Եքանչանները ժամանակի տեւողութեան կը ժանգոտին, գնահատագիրները կը տժգունին, ծափահարութիւնները կը դադարին, անցողական պատիւները կը մոռացուին, ինչ որ կը գոյատեւէ ժամանակին հետ, սիրոյ գործերն են, որ կը փառաւորեն մահկանացու մարդը յաւիտեաններու մէջ:

Աստուած կ'ուզէ, որ մարդիկ իրարու ցոյց տան իրենց մաքուր սէրերը եւ ոչ թէ միմիկ հաշիւները:

Պարսկաստանի մեծագոյն իմաստասէր Ասադի ըսած է, ԱԻՆԼԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ Է ԱՅՆ ՍՈՒՏԸ, ՈՐՄԷ ՄԱՐԴԸ ՕԳՈՒՏ ԿԸ ՔԱՂԷ, ՔԱՆ ԱՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԿՈՒԻ ԿԸ ՍՏԵՂԾԷ:

ԱՍՈՒՄՆԱՑԵԱԼԸ

ՆԱՐԵԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԸՆԴ

ՆԱՐԻՆԷ ՄԻՆԱՍԽԱՆԵԱՆ

Շաբաթ, 7 Յունիս, 2007

Լոս Անճելոս

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու սրտաբուխ բարեմաղթութիւնները նորապսակ գոյգին եւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ «Մասիս»-ի գլխաւոր խմբագիր Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեաններուն:

ԳՆԱՐԱՏԱՆԸ

Լուիզիանայէն Ընկ. Վազգէն Գալթագճեան գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի պասքեթպոլի խումբի տարած յաղթանակը, որ վերջերս տիրացաւ Հ.Բ.Ը.Մ.ի մրցաշարքի բաժակին: Այս ուրախ առիթներով կը նուիրէ՝

\$500 Հ.Մ.Մ.ին

\$500 «Մասիս»ին

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00 Կլէնտոյլի 26-րդ կայանից

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Email:massis2@earthlink.net

»ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ«

ՅԵՌՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵԼՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00



INVESTMENT BANKING

JACK KALANJIAN

Professional Financial Advisor

Corporate Center Pasadena 225 So. Lake Avenue Pasadena, CA 91101 (626) 396-2825 Direct (626) 376-4665 Fax jack_kalanjian@ml.com

"Helping the Armenian Community Build Wealth"

